# ՋԱՆ-ԳԻՒԼՈՒՄԻ ՄԱՍԻՆ

## ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Լոյս ընծայելով մեր «Ջան-Գիւլում»-ների մի փոքրիկ մասը, մենք աչքի առաջ ենք ունեցել նախ այն, որ բաւական թուով Ջան-Գիւլումներ կան անտիպ մնացած եւ ըստ կարելոյն աշխատել ենք գոնէ մի փոքրիկ մասը տպել (317 տուն)․ երկրորդ, որ ցարդ մի այսպիսի ժողովածու գոյութիւն չ'ունի, սակայն կարիքը մեծ է։ Վրաքնակ Սղնախ քաղաքում 1901 թ. Ջան-Գիւլումին 426 նշան էր գրուած եւ բախտուած էին մի եւ նոյն տները կրկնել, թէպէտ մեր այս անտիպ տետրով էին երգում, որ ընդամենը 375 տուն էր բովանդակում։ Երրորդ՝ 'ի միասին ժողովելով այս բոլորը մենք ուզեցել ենք ծանօթացնել հայ բանասէրներին այս գոհարների հետ, որոնք հայ բանաւոր բանահիւսութեան ամենահարուստ ճիւղերից մէկն են կազմում։

Շնորհակալութիւն ենք յայտնում այն բոլոր պարոններին, որոնք չը զլացան մեր նամակներին պատասխանելու եւ կամ բերանացի թելադրելու։

Այս գրքոյկը կազմելիս աչքի առաջ ենք ունեցել եւ օգտուել ենք հետեւեալ գրքերից․ ա) Ռամկական մրմունջներ — Ա. Բրուտեանի․ բ) Քնար Հայկական — Մ. Մխիթարեանի․ գ) Ազգագրական Հանդէս (բոլոր տարիները) — Ե. Լալայեանի․ դ) Գիրոյ եւ Բրոյ, Համով-Հոտով եւ այլըն — Գ. եպ. Սրուանձտեանի եւ այլն։

—

Որքան եւ աշխատեցանք՝ չ'կարողացանք գտնել «Ջան-Գիւլում»-ի ծագման պատմութիւնը։ Հայոց ժողովրդական բանահիւսութիւնը բաւական հարուստ է, եւ մի ամբողջ ուսումնասիրութեան առարկայ կարող է կազմել։ Դեռ եւս Հայկազանց հարստութեան ժամանակներից մենք վկայութիւններ ունենք, որ կային երգիչներ՝ գուսաններ, յիշատակւում են գործիքներ, որոնց վրայ նուագում էին կամ ածում, ինչպէս փող, վին, պանդին, քնար, ջնար, տաւիղ, ծնծղայ, թմբուկ, բամբիռն կամ փամբիռն։ Գողթն, այժմեան Ագուլիսի գաւառը հարուստ էր երգիչ-նըւագողներով, որոնք նոյն իսկ նախարարների եւ թագաւորների մօտ ազատ մուտք ունէին․ նոքա խնջոյքների եւ ուրախութեան զարդն էին։ Գողթն գինեւէտ գաւառներից մէկը ճանաչուած լինելով, բնական է որ ժողովրդի մէջ պէտք է ծագեցնէր երգը, որ առհասարակ ուրախութեան առարկաներից մէկն է։ Մեր պատմութեան հայր Մովսէս Խորենացին իւր պատմութեան մէջ շարունակ յիշատակում է այս եր-

digitised by A.R.A.R.@

գիչներին եւ նոցա բերանից առնելով երգեր է մէջ բերել։ Հին ժամանակ եւ դեռ այս օր էլ մեր ժողովրդի մէջ ամեն մի երեւելի անցք իւր տեղ է գտնում ժողովրդական երգերում, այժմ չկան 'ի հարկէ Գողթան երգիչներն, սակայն կան աշուղներ, որոնց հայրենիքներից մէկն է Ալէքսանդրապօլը․ կան գեղջուկ երգիչներ, որոնք աշուղ չեն, այլ հէնց անպատրաստից այնպիսի ճարտար բանաստեղծութիւն կարող են ասել, որ ամենազօրեղ եւ ճարտար բանաստեղծի գրիչն անգամ կը խոնարհուէր նրա առաջ։ Ժողովուրդը երգում է եւ՛ վիշտ, եւ՛ սէր, եւ՛ ուրախութիւն, եւ՛ մահ եւ այդ բոլորը նա կարողանում է նկարագրել, հասկանալի դարձնել եւ ոգէտ ռամիկը այնքան ճարտար է, որ նոյն իսկ վանկաչափութիւնն ու լեզուական կապակցութեան թելը չէ կորցնում։ Համոզուելու համար ահա ձեզ մի բանաստեղծութիւն 600 տնից բաղկացած, որ հարիւրաւոր հեղինակներ ունի եւ սիրոյ մի ամբողջ շտեմարան է։ Հին երգերի հոգին աւելի ուրիշ է իսկ նորըն աւելի շատ «սէր» այն էլ «գիւղական սէր», որ մեր սիրուց շատ հեռու է կանգնած։ Նա անբիծ է եւ արդար։ Մեր գեղջուկը կարծես թէ մեզ հետ յարմարուել է այդ մի բանում, սակայն նա աւելի լաւ է հասկացել, քան թէ մենք, որ աւելի շատ րոպէական բաւականութեանց ետեւից ենք ընկնում եւ այդտեղ որոնում սէրը, քանթէ կեանքի զոյգ գտնելու։ Մեր օրիորդը «չինովնիկ»-ին է որոնում, «էպօլէտ»-ի փայլը շլացնում է նրան, հարստութիւնը ծնողներին զաւակավաճառ է դարձնում, իսկ գեղջկուհին ուրախ է եթէ իւր եարը ռանչպար է, տիրացու, տէրտէրացու, դուքեանդար, խաչնարած եւ այլն․ Նա քաշւում է քեօխվացուից (գիւղի տանուտէր)․ Նա ատում է «չինովնիկ» դասակարգին։

Մեր երիտասարդը փողով աղջիկ է որոնում, սէրը երկրորդական բան է, իսկ գեղջուկը բաւականանում է, եթէ իւր սիրած աղջիկը կարմրաթուշ է։

Որպէս զի հին եւ նոր բանաւոր բանահիւսութեան մէջ եղած տարբերութիւնը նկատելի լինի, մենք առաջ կը բերենք մի քանի հին երգեր։

Մ. Խորենացին առասպել-ներից առնելով մէջ է բերել Երուանդ Ա. Սակաւակեաց կոչուած Հայկազունու քեռայր Վարդգէսի ամուսնութիւնը (Գիրք Բ, գլ. կե)․

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն
Ի Տուհաց գաւառէն զՔասաղ գետով,
Եկեալ նստեալ զՇրէշ 1) բլրով,
ԶԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով,
Կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի....։

---

1) Բլուր Շրէշ անունով, որ գտնւում է Ս. Էջմիածնից ոչ հեռու, այժմ էլ երբ քանդում են այլ եւ այլ իրեղէններ են գտնում։

digitised by A.R.A.R.@

Նոյնպէս աղբիւրներից եւ առել Խորենացին , լսել է երգելն ու բամբռան վրայ նուագելը Հայոց Վահագն Թագաւորի մասին ասածը ։ Այս Վահագնին աստուածացրին եւ Հերքուլէսի քաջութիւններից մի քանիսը սրան էին վերագրում , այդպէս եւ Յարդգողի ճանապարհի պատմութիւնը ։ Ահա մեր հին երգիչներն ինչպէս են նկարագրում նորա ծնունդը (Խոր․ Գիրք Ա , գլ․ լա)․

Երկնէր երկին եւ երկիր ,
Երկնէր եւ ծիրանի ծով ,
Երկն 'ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն ․
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր ,
Ընդ եղեգան փող բոց ելանէր ,
Եւ 'ի բոցոյն պատանեկիկ վազէր 1)․
Նա հուր հեր ունէր
(Ապա թէ) բոց ունէր մօրուս
Եւ աչկունքն էին արեգակունք ։

Նշանաւոր Արտաշէսի , որ հայ Աղէքսանդր Մակեդոնացի է , ամուսնանալու մասին էլ գեղեցիկ երգեր կան չարագրուած , օր․ Ալանաց օրիորդի փախցնելու մասին ասում էր (Խոր․ Գիրք Բ , գլ․ ծ)․

Հեծաւ արի արքայն Արտաշէս 'ի սեաւն գեղեցիկ ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն ,
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն ,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն ,
Ընկէց 'ի մէջք օրիորդին Ալանաց ․
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին ։

Հարսանիքի մասին էլ ասում էր (Նոյն տեղ)․

Տեղ ոսկի տեղայր 'ի փեսայութեանն Արտաշիսի ,
Տեղայր մարգարիտ 'ի հարսնութեան Սաթինկանն ։

Արտաշէսի թաղումը շատ հետաքրքիր կերպով է կատարուել ։ Աշխարհակալ թագաւորը չը տեսնուած պատուով է թաղուել եւ ինչպէս Խորենացին ասում է , ցաւն այնքան մեծ էր , որ շատերը գերեզմանի մօտ անձնասպանութիւն գործեցին ։ Այս բոլորը անհաճոյ էր Արտաւազդին , որ նրանից յետոյ թագաւորեց եւ իբր թէ սա խօսել է իր մեռած հօր հետ , որ նրան անիծել է (Խոր․ գիրք Բ , գլ․ կա)․

Մինչ դու գնացեր եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար ,
Ես աւերակաց ո՞րպէս թագաւորեմ ։

Մեռած Արտաշէսն այսպէս է անիծում , որ ըստ աւանդութեան կատարուել է ․

---

1) Այս տողը 1695 թ․ Ամստերդամում տպուած Խորենացու մէջ այսպէս է գրուած ․ «Եւ 'ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ» ։

digitised by A.R.A.R.@

Եթէ դու յորս հեծցիս
Ցազատն ի վեր 'ի Մասիս,
Զքեզ կալցին քաջք,
Տարցին յազատն 'ի վեր 'ի Մասիս,
Անդ կացցես եւ զլոյս մի տեսցես։

Արտաւազդի համար էլ, որ անպիտանի մէկն էր, ասում էր թէ ծնունելիս նրան գողացել եւ փոխանակ դեւ են դրել.

Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ,
Եւ դեւ փոխանակ եդին։

Մի յիշատակութիւն էլ գեղջկական երգերից կայ Գրիգոր Մագիստրոսից մեզ հասած.

Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց եւ զվազելն եղջերուաց.
Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք։

Մովսէս Կաղանկատուացու Աղուանից պատմութեան մէջ էլ կայ մի այդպիսի հատուած, որը երեւի նոյն ձեւով ծագած պէտք է լինի ինչպէս վերինները։ Ցամենայն դէպս այս բոլոր նմուշներից մենք այն եզրակացութեան ենք գալիս, որ հնումն էլ ինչպէս այժմ մենք ունեցել ենք բանաւոր բանահիւսութիւն, որ բաւական հարուստ է եղած, սակայն մեզ շատ քիչ է հասել այդ բոլորից։ Այս բոլորը 'ի հարկէ մեր մէջ հարեւան ազգերիցն է անցել, աւելի շատ յոյներից, որոնց մէջ կարծիք կայ, որ Հոմերոսի Իլիականն ու Ոդիսականը եւ միւս նրման գրուածքները առաջ բերանէ բերան են անցել երգելով եւ նուագելով եւ յետոյ գրի առնուել։

Հին երգերն երգուել են ժամանակակից լեզուով, `իսկ հետզհետէ այդ լեզուն կերպարանափոխուել է, փոխուել է լեզուի ձեւը, նոր բառեր են մտել հարեւան ազգերից եւ ստացուել է այժմեան ռամկական լեզուն։ Ջան-Գիւլումները այս վերջին լեզուով են։ Այնպիսի տներ կան որ խօսքերի եւ նախադասութեան տեղափոխութեան են ենթարկուել, սակայն ընդհանուր միտքը նոյն է մնացել։

«Ջան-Գիւլում»-ի ծագումն շատ հին պէտք է լինի եւ գուցէ հեթանոսութիւնից մնացած։ Սրանից չորս տարի առաջ մի տատի մեր Ջան-Գիւլումի նման մի երգ էր երգում, եւ նա պատմեց մեզ, որ դա Կայէնի եւ Աբելի մասին է ասած։ Ժողովրդի վառ երեւակայութիւնն ահա թէ ինչպիսի աւանդութիւն է ստեղծել. Կայէնը սպանել է Աբելին, մի աղջկայ պատճառով։ Ցաւում ենք որ մեր բոլոր ջանքերն 'ի զուր անցան եւ չը կարողացանք գտնել այն տատուն աւելի լուսաբանելու այդ աւանդութիւնը։ Այնու ամենայնիւ մենք այն կարծիքի ենք, որ դա հեթանոսական սովորութիւններից մէկն էր, որ կատարւում էր մի

digitised by A.R.A.R.@

որ եւ է հեթանոսական տօնին ։ որ մեր Համբարձման տօնի օրերին էր լինում եւ գործողութեան տեղը որ եւ է բաղինի կամ կուռքի շուրջ եղած բակն էր։

Շատ սովորութիւններ են անցել հեթանոսութիւնից քրիստոնէական աշխարհ եւ շատերից մէկն էլ այդ պէտք է լինի։

Համբարձման օրը մի տեսակ սրբազան նշանակութիւն ունի։ Այդ օրը խորհրդաւոր օր է [1]։

Ջան-Գիւլումը կատարւում է եկեղեցու, վանքի եւ կամ մատրան բակումը, յաճախ գերեզմանատան եւ կամ ստուերազարդ անտառում։ Հանդէսը սկսւում է հետեւեալ կերպով։ Համբարձման Նախընթաց օրը օրիորդներն ու երիտասարդները վայրի ծաղիկներ են հաւաքում, դաշտում եւ կամ թէ եկեղեցու բակում· դորա հետ խառնում են եւ փոքրիկ քարեր ու մասնակցողներից հաւաքած «նշան»-ներ եւ լցնում են մի նախշուն ամանի մէջ (քիլայ)։ Կէս գիշերին մէկն անխօս աղբիւր է գնում ջուր բերելու, որ լցնում են այդ ամանի մէջ։ Ամանը մինչեւ միւս առաւօտ պահում են եկեղեցու եւ կամ այնպիսի մի տան, որտեղ անցած Համբարձումից ոչ մի դժբաղդութիւն տեղի չէ ունեցած։ Միւս օր պատարագից առաջ կամ յետոյ եւ կամ ճաշից յետոյ հաւաքւում են մասնակցողները, մի փոքրիկ աղջկան ծածկում են քօղով եւ այդ «քօղով հարս»-ի հետ գնում որոշեալ տեղը եւ տանում ամանը ճանապարհին երգելով ժողովրդական կամ ազգային երգեր։ Հանդիսավայրում տղայք եւ աղջկերք խումբ կազմած երգում են մի մի տուն իսկ «քօղով հարսն» էլ ամեն մի տուն երգելուց յետոյ մի նշան է հանում, որ տալիս են տիրոջ։ Այսպէս շարունակւում է մինչեւ վերջանալը։

Սրանից յետոյ սկսում են եայլի կապել, պարերգեր երգել, եւ նոյն ձեւով վերադառնում են տուն։

—

Այս գրքոյկը կազմելիս կարեւոր համարեցինք ծանօթութիւններ տալ, որ ցանկացողը կը գտնէ գրքոյկիս վերջը։ Միեւնոյն ժամանակ աշխատեցինք բացատրել անհասկանալի բառերը, սակայն անյաջող, որովհետեւ շատ բառեր ոչ մի միտք չեն արտայայտում, այլ ուղղակի յանգեր կազմելու համար գրած են, շատ բառերն էլ անտեղի են եւ բացատրութիւնը մաքին չէ համապատասխանում· ուստի խնդրում ենք ներողամիտ լինել։ Սորա հետ միասին խնդրում ենք ուղարկել մեզ անտիպ Ջան-Գիւլումներ եւ մենք չենք զլանալ միւս անգամ 600-ի տեղ 6000 տուն տպելու։ Մեզ մօտ՝ մօտ 150 տուն դեռ մնում է, որ մեզնից անկախ պատճառներով չենք կարողանում տպել։

ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

---

1) Այդ օրուայ սովորութիւնների մասին մենք գրել ենք «Համբարձման տօնը» վերնագրով մի յօդուած (տես Բանասէր, Ապրիլ 1902 թ. Փարիզ)։

digitised by A.R.A.R.@

# ՋԱՆ-ԳԻՒԼՈՒՄ

1 Ծառիս տակը մանիշակ,
Իմ եարը քանց քեզ չիշակ 1),
Ութը թումանից անց կենամ
Քեզ կանեմ եարիս մշակ ։

2 Ծաղիկ ունիմ նարընջի,
Ա՛յ աղայ, վե՛ր արի, փնջի,
Իմ մէր քեզ աղջիկ չիտալ
Քանի՞ ման գաս եաւրընջի 2)։

3 Եարըս եարալու արեց 3),
Հաւը մեր տանը թառեց,
Հողեմ ես նրա գլուխը
Երեք-չորս տարի խաբեց ։

4 Լուսնեակը նորէ, նորէ,
Եարիս երեսը կլոր է,
Կլոր սուրաթին 4) մեռնեմ,
Հագինը կարմիր չոր է ։

5 Վարդեր ունիմ բօլ ու բօլ 5),
Եարիս երեսն ա կլոր,
Որ առում եմ հոտկու ա,
Ինքըն ա Աւյանի սօլ ։

6 Ա՛յ աղայ հուր ես, մուր ես,
Ես ծառաւ եմ դու ջուր ես,
Մուղամբլան թալան 6) չոր ես.
Համբարձում գիշերն ուր ես ։

7 Դու նստել ես դերանին,
Ղաղու 7) չուլին բերանին,
Օսկէ ղայթան 8) եմ գործել
Կարեմ ջիբլիդ բերանին ։

8 Սպիտակ ձին նալն ի՞նչ կանի,
Սիրունը խալն ի՞նչ կանի,
Քեզի սիրող իգիթը 9)
Աշխարհի մալն 10) ի՞նչ կանի ։

9 Ջաղացիս յետի կուտը
Կը ցնծայ միջի գիւլը 11)
Վա՛յ, ի՛մ սիրած բլբուլը
Քաշեցին խանի դուռը ։

10 Շատ մի անի վար ու ցած
Ես քեզ վաղուց եմ տեսած,
Մենք իրարու նման ենք
Մի խնձոր էրկու կիսած ։

11 Ախչի, ախչի, ա՛յ ախչի, (չի 13),
Գիւլ ես լման 12) մեր բախ.
Էլ մի ընկնի գարբէգար 14)
Արժան արա՛ մի պաչի ։

12 Եարը դիւէր չուխաւոր,
Ալ ձի նստելը սաւոր,
Ալ աղլուխն էլ որ կապէ
Ինձի լինի թագաւոր ։

13 Քուչէքը լիքը լիքը,
Ախչի՛, տաայ քու միտքը,
Ձեռով կանեմ արի տե՛ս,
Վալա՛հ, մատնի կը տամ քեզ ։

14 Կայնել ես կանչում էլ չես,
Բօյիդ 15) ամաչում էլ չես,
Էկայ կշտովդ անցկացայ
Տէր ես ճանաչում էլ չես ։

---

1) Դերահաս. — 2) Անգործ. — 3) Վիրաւորեց. — 4) Պատկեր, դէմք. — 5) Շատ. — 6) Գեղեցիկ. — 7) Փորձանք. — 8) Հաստ թել. — 9) Կտրիճ. — 10) Ապրանք, ինչք. — 11) Վարդ. — 12) Նման. — 13) Պարտէզ. — 14) Դէսուդէն. — 15) Հասակ ։

digitised by A.R.A.R.@

15 Սարերը բարակ սէգ ա,
Բաղել ես կակուղ բէզա 1),
Հազըրլի՛ 2), արի՛, գնա՛նք
Բանի չի մթնել թէզ ա 3)։

16 Իմ եարը տիրացու է,
Ցատուկ տէրտէրացու է,
Մազերը որ վեր ունի
Մի գիւղի քեօխվացու է 4)։

17 Մէ եար ունի՛մ եարա՛ 5),
Եարը չի, զահրումար ա,
Նըրա ձեռքին տանջուելով
Թամամ ղամիշ 6) եմ դառայ։

18 Ամպեր մի քիչ հով արէ՛ք,
Անձրեւ թափէք՝ ծով արէ՛ք,
Գէշ մարդու էլ ու գիւնը 7)
Սեւ հողի տակով արէ՛ք։

19 Քաղած արտը հաց տալայ,
Եարիս տեսայ եմ դառայ,
Էս ինչ բէբաղդ 8) եար եմ ես
Խնձոր տուաւ ես չառայ։

20 Թօփը 9) խըփեց վերի դին,
Սէլաւ 10) էկաւ մեր կալին,
Վա՛յ կըտամ, վա՛յ կասեմ,
Շուտով բերէ՛ք իմ եարին։

21 Ժամի պատը տաշած է,
Բեզի վըրէն քաշած է,
Ճամբից պաշարի համար
Զաղ հաւերը խաշած է։

22 Մեր տուն, ձեր տունը մօտիկ,
Կապել եմ խալէ զօտիկ,
Էս վանքի ըխտաւորից
Մենակ դու ես խօրօտիկ 11)։

23 Բիւլբիւլ արի մեր բաղը,
Ասա՛ իմ եարի խաղը,
Խաղից միջով բարեւս
Հասցրու իմ եարիս թաղը։

24 Ամպը քըցել ա հովը,
Առուովն անցայ էն քովը,
Տեսնում եմ քեզ պատել ա
Էս անիրաւ սեւ ծովը։

25 Աչքերդ դեղ ես դրել,
Ինձ գըժի տեղ ես դրել,
Անըզգամի խօսքովը
Իմ վրայ մեղ ես դրել։

26 Բեանքիւլից 12) կալին մեռնեմ,
Էրեսից խալին մեռնեմ,
Լսել եմ կարդացել ես
Սաղմոսից կողին մեռնեմ։

27 Գուճուր աղջիկ սեւաւոր,
Խալխի դանները սաւոր,
Գընա՛, մէրդ կանչում ա,
Թո՛ղ ինձ չ'անէ մեղաւոր։

28 Ես մի անզալաթ 13) ղուշ եմ
Թայերիս 14) մէջ նմուշ եմ,
Ի՛նչ հարս, աղջի՛կ որ տեսնես
Ես բոլորից անուշ եմ։

29 Կողբայ քամին բոլորուաւ,
Եարիս բեխերն ոլորաւ,
Եարիս գըրեցին սալդատ
Սիրտըս, փորս մոլորուաւ։

30 Սիրածս քամար ունի,
Աշխարհի չափ մալ ունի,
Ինձ էլ որ իր կին առնէ
Էլ բանի կարօտ չունի։

31 Վարդ էք տալիս ի՛նչ անեմ,
Մարգարիտը ի՛նչ կ'անեմ,
Եարիս բերէ՛ք, որ տեսնեմ,
Ալ 15) աղլուխը ի՛նչ կանեմ։

32 Քա՛ր է սիրտըս, քա՛ր ա,
Սիրտըս, ջըրից վարար ա,
Գեղի աղջի խօրօտը
Իմ սիրած սիրուն եար ա։

---

1) Զարդարած. — 2) Պատրաստուիր. — 3) Վաղ է. — 4) Տանուտէր. — 5) Վէրք. — 6) Եղէգն. — 7) Ազգն ու օրը. — 8) Անբաղդ. — 9) Թընդանօթ. — 10) Հեղեղ. — 11) Գեղեցիկ. — 12) Գլխի ճակատին Թա-

digitised by A.R.A.R.@

**33** Համբուրել եմ մեր ու խաչ,
Առել եմ մենծ սրբի աջ,
Ս. Կարապետ զօրաւոր
Եկել ընկել եմ առաջ։

**34** Զօրացաւ կանանչ տերեւս,
Խաւարաւ օրըս, արեւս,
Ես չատ անբաղդ աղջիկ եմ,
Որ չ'հասաւ քեզ բարեւս։

**35** Ջաղացս պտտիկ-պտտիկ,
Աչքերդ նուռն հատիկ,
Ամեն քեզի տեսնելիս
Համ Համբարձում համ Զատիկ։

**36** Անձրեւն եկաւ գեօլ 1) արեց,
Աստուած տարին բօլ արեց,
Ասէք տեսնեմ, ո՞ր քեօռը
Եարիս խաթրըջան 2) արեց։

**37** Ռանչպար ա 3) եարս հէր չ'ունի,
Եթում ա 4) եարս մէր չ'ունի,
Հէչ 5) մի կարծէք թէ եարս
Բոլորովին տէր չ'ունի։

**38** Ծիրան եմ ծառի ծէրին,
Կերերամ՝ հետ թերերին,
Էկան, քաղեցին, տարա՛ն
Ծախեցին ախմախներին,

**39** Ջեռներդ ծափ ես տալիս,
Բեանքիւլդ թափ ես տալիս,
Էսօր էքուց ես քցել՝
Ամեն օր խափ ես տալիս։

**40** Տիրացու ես գիլ 6) ձէնով,
Եար ես բլբուլի ձէնով,
Տաղ ու սաղմոս կը կանչես
Թամամ տէրտէրի ձէնով։

**41** Արեւ ծագեց մեր վըրէն,
Փայ տանեն ամենքն իրեն,
Արեւ ջա՛ն, մէ խաբար տուր
Իմ սիրա՞ծ անուշ եարէն։

**42** Վըրաց եօրղան ես քաշել,
Սի՛րտս, հոգիս ես մաշել,
Աստուած անէ լաւանաս
Մեր տան պզտի հարս դառնաս։

**43** Իմ եարին հասէք հաւար 7),
Ջէրը լիք է, սովդաքար 8),
Բանի ես աչք եմ բացել
Ծնուել ես ընձի համար։

**44** Աշտարակ ձուն ա գալիս,
Մեր ժամը փուլ ա գալիս,
Մէ՛ բէյմուրազ 9) եար ունիմ,
Հարբում ա տուն ա գալիս։

**45** Արագն թաց արաւ արաս 10),
Իր ափն ա լցրել աւազ,
Զուր 11) մեր պտակի վախտը
Կը մընայ դուզ 12) չորս կարաս։

**46** Անձրեւ խփեց սարիցը,
Քար ընկաւ մեծ գարիցը 13),
Գիր չը տացայ որ տանեմ
Իմ սիրելի եարիցը։

**47** Նշան տուի զատկին քեզ,
Իմ պադն 14) է առել երես,
Համբարձումին գըրի նաչ 15)
Աստուած խըղճալ չը գիտես։

**48** Մեր տունն եկել ես փեսայ,
Սրտով սիրածիս տեսայ,
Էլ չեմ ուզե ուրիշին
Իմ սիրած եարն էս ա։

---

ղած մազը. — 13) անմիքաս. — 14) Բուսակ. — 15) Կարմիր՝ մուք։

1) Լճակ. — 2) Խօսք չը կատարել, կամքը չը կատարել. — 3) Երկրագործ. — 4) Որբ. — 5) Բոլորովին. — 6) Բարակ բարձր ձայն. 7) Օգնութիւն. — 8) Վաճառական. — 9) Անպէտք. — 10) Ափ. — 11) Մինչեւ. — 12) Ճիշտ. — 13) Զառ'իվայր. — 14) Համբոյր. — 15) Դագաղ։

digitised by A.R.A.R.@

49 Աչքերս թաց ես արել,
Եօրղանդ բաց ես արել,
Քուրիկ նայէ իմ եարին
Վարդ ու մեխակ ա դառել։

50 Ձիւն ա էկել հալել ա,
Լցուել գետը սառել ա,
Էտ էլ օղլու 1) գէշ խօսքը
Ինձ մոմի պէս վառել ա։

51 Ծաղիկ ունիմ ալայ ա,
Ալայ չի, ալ վալայ ա,
Եար բռնելը լաւ բան ա,
Բաց թողալը բալայ ա 2)։

52 Ա՛յ եա՛ր, չո՛ւտ արի,
Քարկուռ 3) չոլերով 4) արի,
Քար չոլերով ման կը գամ
Թէ կորցնեմ սիրած եարի։

53 Ախչի ինադ 5) մի անի,
Վե՛ր կաց, կայնի դու բանի,
Ձեռքդ տար սրտիս մէջը
Դարդերս 6) մէկ մէկ հանի։

54 Քեարաբս աղ եմ արել,
Ջիգեարս դաղ եմ արել,
Դօստ 7) ու դուշմանիս 8) միջին
Լացս ծիծաղ եմ արել։

55 Բաղ եմ քցել նոր 'ի նոր
Հասցրել եմ մի խնձոր,
Եարիս տեսնելու համար
Քանի՛ ընկնեմ սար ու ձոր։

56 Ա՛յ Արազ ջուրդ վարար,
Եարաբ 9) եարիս չը տեսա՞ր.
Ես չը հասայ մուրադիս 10)
Եարաբ կարօտս առա՞ր։

57 Մանի մանի մի բերան,
Սէլը տանի ջուխտ գերան,
Գէշը 11) սիրունի ծոցին,
Հա՛յ, վա՛խ ու հարուր բերան։

58 Ա՛յ տըղայ մեր գեղըցի,
Բերանըդ եկեղեցի,
Կարմիր քարը տաշեցի
Բօյըդ վըրէն քաշեցի։

59 Ալամ 12) աշխարհ ման էկայ,
Գեղիս միւս գեղը ընկայ.
Ո՛ւմ որ հարցրի, բան չըսին,
Ես իմ եարին չը գըտայ։

60 Ժամը տուին ժամ կասեն,
Տէրտէրները տաղ կասեն,
Եարըս, աղբէրըս գինովցած
Նստած դզում 13) հաղ 14) կասեն։

61 Սափորը ուսիս դըրի,
Էրթամ աղբուրը ջըրի,
Ի՛նչ փուշ գայ իմ առջեւը
Դուշմանիս սրտով խըրի՛։

62 Կապել ես քիրման գօտիկ,
Մարդ չես թողնում քեզ մօտիկ,
Համ տեսքով ես համ հոտով
Քան ըզծաղիկ խօրօտիկ։

63 Ջուն գընեմ թաւէն խաշեմ,
Ելնեմ էրթիկը աշեմ,
Տեսնեմ եարըս գալիս ա.
Ձոքեմ չաքմէքը 15) քաշեմ։

64 Լուսնեակը պահ ա մտել,
Անուշ եարիս չեմ գտել,
Աչքըս արտասուք լցուած
Ես տեղաշոր չեմ մտել։

---

1) Օտար մարդ — 2) Վտանգաւոր է, խաթարալայ է. — 3) Քարքարոտ. — 4) Դաշտ. — 5) Յամառութիւն. — 6) Վիշտ, ցաւ, հոգս. — 7) Բարեկամ, ընկեր.—8) Թշնամի. — 9) Արդեօք. — 10) Իղձ, ցանկութիւն. — 11) Տգեղ, վատ. — 12) Ամբողջ. — 13) Դաշտում. — 14) Երգ. — 15) Կօշիկ։

digitised by A.R.A.R.@

65 Կայնել ես ձեր դրան բաշ 1)․
Սիրտս էլաւ հալումաշ,
Արեւելքից-արեւմուտք
Խալխ ա 2) եկել քու թամաշ 3)։

66 Էս ա գալիս եմ քեզ մօտ,
Քեզի վաղուց եմ կարօտ․
Վա՛յ թաղեմ մօրըդ գլուխը
Սիրտըս արել ա դարդոտ։

67 Հագել եմ ալ եմ եղել,
Արաէս հիլալ եմ 4) եղել,
Հէրու 5) իմ բլբուլ լեզուս
Էս տարի լալ եմ 6) դառել։

68 Տուն եմ շինել գետափին
Բաղ եմ քցել առաջին,
Նարիս հետ փչփչում եմ
Նստած ծառի շուաքին։

69 Վարդապետի սեւ վեղար,
Ես քո եար եմ եկ ինձ տար,
Ղըզըլբաշը 7) կայներ ա,
Շուտ արա՛ ինձ ձեռքէն ա՛ռ։

70 Ա՛յ նազանի, հազանի,
Ունքդ քամի 8) լմանի,
Թէ՛ սիրում ես ինձ քեզ ա՛ռ,
Վարդավառին՝ էս տարի։

71 Մէ եար ունիմ վա՛րդ ա,
Վարդը չի գլխիս դա՛րդ ա,
Փահլըվանի կշտին էլ
Ամենից ուժով մարդ ա։

72 Բեխդ քաշէ, կըլորի,
Կարմիր թուշդ բըլորի,
Ով քեզ իմ ձեռից առնէ
Ընդոր տան դուռ մոլորի։

73 Շինել են աղիզիս նաշը,
Էլ ոնց ծածկեմ չաղարշը
Առաւօտուց իրիկուն
Լացն է իմ հացն ու ճաշը։

74 Աշունք գալիս ա գալիս,
Էլ ինձի քուն չի տալիս,
Իմ եարըս սալդաթ ա գնում
Սիրտըս այրւում ա լալիս։

75 Ջաղացիս դուռը տաշած,
Աղլուխիս գիւղը քաշած,
Մեռնեմ կեռ կեռ ունքերիդ,
Օսկէ ղալամով 10) քաշած։

76 Մեծ կալը երես երես,
Բաղըրդեան Աստուած սիրես,
Բաշ Շորագեալ գընալիս
Իմ եարը հետդ բերես։

77 Վանքը ամպումն ա մնացել
Իմ եարըս վանք ա գնացել,
Նրա տաղերն երգելուս
Վանքը աչքառ 11) է մնացել։

78 Բլբուլ ես մի խաղ կանչէ,
Մարալի 12) պէս տաղ կանչէ,
Նազանի եար քեզ մեռնիմ
Թո՛ղ աշխարքը ամանչէ։

79 Բուսնել ես բաղի միջին,
Շամամի 13) թաղի միջին,
Գիշեր ցերեկ միալար 14)
Դու ես իմ խաղի 15) միջին։

80 Սեւ ունքեր կամար կամար
Ես կապրեմ քեզի համար,
Օխտը տարի սեւ հագայ
Քո աղիզ 16) խաթեր 17) համար։

---

1) Բարձր տեղ․ — 2) Ժողովուրդ․ — 3) Տեսնելու․ — 4) Մաշուած, կմախք դառած․ — 5) Անցած տարի․ — 6) Մունջ․ — 7) Պարսիկ․ — 8) Սաթ․ — 9) Կարիճ, քաջ․ — 10) Գրիչ․ — 11) Զարմացած․ —12) Եղնիկ, եղջերու․ փխ․ գեղեցիկ․ — 13) Սեխի փոքրիկ տեսակը՝ առհասարակ նարնջագոյն եւ հոտաւէտ է․ — 14) Միշտ․ — 15) Երգ․ — 16) Հարազատ․ — 17) Ցարդ, պատիւ։

digitised by A.R.A.R.@

**81** Զօրս տարի ա գընացել,
Սիրտս դաղ 1) է մնացել,
Եար ջան վաղէդ 2) անցել ա
Երկու ամիս ա մնացել։

**82** Քանաքեռ բարձր տե՛ղ ա,
Ջուրը հիւանդի դե՛ղ ա,
Սիրած սիրածին չեն տայ
Էս ի՛նչ անօրէն դե՛ղ ա։

**83** Վերնաքամին գալիս ա,
Թիկնամէջս տալիս ա,
Մէյդան արէ՛ք 3) անց կենամ
Կարօտ եարս գալիս ա։

**84** Հագինդ կարմիր շալ է,
Կերած կաթդ հալալ է,
Չը լինի՛ որ ինձ թողնես
Եարդ քեզ պէս մարալ է։

**85** Եար ջան դառել ես փաշա,
Կերածդ սիպտակ լաւաշ ա,
Եար ջան շուտով դո՛ւս արի,
Գեղն եկել ա թամաշա։

**86** Բուրդն հաստու մեր գեղը,
Տղայ ես գնա էն տեղը,
Թէ սիրել ես դու ընձի
Քաղէ ախմախի բեղը։

**87** Հաւը թռաւ թառն ելաւ,
Մեր բանը դաւումն ելաւ,
Սարաքի 4) որդին մեռնի
Դուշմանի սրտումն ելաւ։

**88** Տառը բերել ա ծիրան,
Եարըս եար չի այլ ջէյրան 5)
Որ նա՛ իմ սիրած եա՛րն ա
Էդ գիդա ողջ Հայաստան։

**89** Գեղի միջին մենակ ես,
Լուսնեակ ու արեգակ ես,
Երգէ՛ երգելուդ մեռնիմ
Պապոնց բաղի տոխակ ես։

**90** Դու իմ թառլան եա՛ր ես,
Երկընքի մեծ Նուբա՛ր 6) ես
Արի՛ հետս պսակ դիր,
Խօջայի բարեբար ես։

**91** Օչխարն քաշուել ա եայլաղ 7),
Ալուր բիթուն 8) ա չարմաղ,
Մէ եար ունիմ խօրօտիկ
Քաղքու քուչումն ա դապաղ 9)։

**92** Ընկել ես մեր գեղից գեղ,
Էլ չես թողել մաքուր տեղ,
Ամենիս հոգին առել
Քեզ ես դուս բերել անմեղ։

**93** Սէյրըդ 10) լըման ա ջէյրան,
Սզբէր եղել այ հէյրան 11),
Տէսնում եմ որ սիրում չես
Էլ չը դո՛ւս գաս մեր մէյտան։

**94** Նոր-տարուն ինձ խօսք տուիր,
Սիրտս կրակով լցրի՛ր,
Սա՛ տեսնեմ, ո՞վ արեց,
Որ ինձ էսպէս քցեցիր։

**95** Ջուանա՛ պասսա 12) արէ՛ք,
Իմ եարիս տունը տարէ՛ք,
Երբ ես ձեզ աչքով անեմ
«Տարան-տարան»-ը չալէ՛ք։

**96** Վերմակդ ներքեւ քաշէ,
Եարդ եմ, եկել ինձ աչէ՛, 14),
Թէ սիրում ես ընձի թո՛ղ
Պարկեմ, էլ սիրտս մի խաչ։

---

1) Այրուած. — 2) Ժամանակամիջոց. — 3) Տեղ տուէք. — 4) Պատճառ. — 5) Եղնիկի տեսակ կենդանի. — 6) Ընծայ, նուէր, պարգեւ. — 7) Ամառանոց. — 8) Բոլոր. — 9) Կաշէգործ. — 10) Ման գալը. — 11) Հիացում. — 12) Խումբ. — 13) Նուագել. — 14) Նայի՛ր։

digitised by A.R.A.R.@

97 Պառկել ես կակուղ հողին,
Մուրազըս փորս թողին,
Կարմիր գլուլէն 1) դիպնի
Գէշ մարդու կուշտ ու կողին։

98 Գընա՛, ելի՛ դէմի սար,
Սէր ու սուդէն 2) հեռու տար,
Քեզի էդ տեղ քցողը
Բալքի 3) էլնի սարրէդար 4)։

99 Ախչի, արի՛ մեր բաղը,
Պոկեմ չամամի թաղը,
Քո էլեսի չափաղը 5)
Հանել ա սրտիս դաղը։

100 Ախչի՛, նստի կար արա՛,
Ինձի քեզի հար արա՛,
Բաղի էն քուչոյէն արի,
Ձեռքերդ չարդախ 6) արա՛։

101 Ելայ երդիկը բացի,
Տեսայ եարիս ու լացի,
Ով սիրածս ինձի չը տայ
Կարօտ մնայ օրուայ հացի։

102 Է՛նա, տղէք թօփ էզան 7),
Աղբէրս ու եարս երեւցան,
Էնոնք որ պար բոլորուան,
Աղբէրս ու եարս մոլորուան։

103 Ղօշի վանքի դշերը
Ոտս ծակին փշերը
Էրնէկ կը տամ էն օրուան
Որ պաչեմ քո թշերը։

104 Քեալլա-ղաղէն արտ չ'ունեմ,
Հալղը 8) գիտէ դարտ չ'ունեմ,
Դարտը ընձի տարել է
Ջահել եմ խաբար չունեմ։

105 Մի ջաղաց էրկու դըռնի,
Բարձը դըրէք եարըս կոնի,
Ես ու դու մի բաղում պտենք,
Ես չինարի դու նռնի։

106 Բերդիս կըտերը ցել ունեմ,
Ալ արբեշում թել ունեմ,
Թելիկ-մելիկ սարկաւագ,
Ես քեզանից մէյլ ունեմ։

107 Մեր տուռն շատացել է,
Եարս անհետացել է,
Քանի վախտ ա չեմ տեսել
Դարդերըս թազացել է։

108 Մէ եար ունիմ աչքի ա 9),
Մէջքը բարակ ղամչի ա 10),
Չը գիտեմ անըմն ինչ ա,
Մի գիւղի բոյախչի ա 11)։

109 Ախչի ի՛նչ շատ մազ ունես,
Սողանու փարուազ 12) ունես,
Խօսքիս ջուղաբ տալիս չես
Ի՛նչ շատ էշխ 13) ու նազ ունես։

110 Ծնծա՛ արաղի թասին 14),
Բոքիկ կուզայ հաւասին 15)
Գլխին զարկէք քոռանայ
Ձեռքից խլէք արասին։

111 Ախչի նստել ես կարի,
Ալ արխալըխ մի՛ կարի,
Եարիդ սալդաթ են տարել
Պըտի սպասես չորս տարի։

112 Բաղումը կար բաղմանչի,
Շուքին ածէր ու կանչէր, [տան,
Թարուն տարած 16) դուրս թըր-
Մինն իմ եարին նման չէր։

---

1) Գնդակ. — 2) Սէր. — 3) Թերեւս. — 4) Նժդեհ, տարագիր. — 5) Գեղեցկութիւն. — 6) Սրահ, ծածկոց. — 7) Հաւաքուեցան. — 8) Ժողովուրդը. — 9) Որսորդ. — 10) Եղէգն. — 11) Ներկարար. — 12) Գլխի զարդ. — 13) Գրաւիչ տեսք. — 14) Բաժակ. — 15) Ջըր-տում, ուզելը. — 16) Խմբուած.

digitised by A.R.A.R.@

113 Գուճուր 1) աղջիկ զալում 2)ես ,
Մազերըդ սղալում ես 3) ,
Խունջիկ մունջիկ 4) մի էղնի ,
Ինձ առնելու կամ ունես ։

114 Աչքերդ շատ չալչալ ա 5) ,
Ամէն թշիդ մի խալա ,
Ա՛խ, էն օրը ե՞րբ կը գայ
Գլխիդ քցես ալվալա 6) ։

115 Վէրի սարից գալում ես ,
Շաքարի պէս հալում ես ,
Բերանդ լէն մի՛ բանա
Դու քու ազգով մալոզ ես 7) ։

116 Մեր տան առնէն մի մառան 8),
Տղերքն եկան ետ դառան ,
Ձեռս սարայ թէ բռնեմ
Դիփ լալ ու մարջան դառան ։

117 Աղբե՛ր, եօլդաշներդ 9) եկան,
Եօլդաշներիդ ես ղուրբան ,
Նըրանց միջի պզտիկը
Ինձ արել ա հոգեհան ։

118 Ինձի համար յուսնեակ ես ,
Եաղութից 10) անգին ակ ես ,
Աստըծու ղաղարին 11) գաս
Թէ դուռդ ինձ դէմ փակես ։

119 Ջաղացս մանի , մանի ,
Քունս անուշ կը տանի ,
Իմ եարը սարում քոլում
Իմ քունը ո՞նց կը տանի ։

120 Ղարաֆիլ եմ 12) տա՛լ չ՚ունեմ,
Խաս 13)իգիթ եմ 14)եա՛ր չ՚ունեմ
Եարս եկաւ անցկացաւ ,
Ջահիլ եմ խաբար չ՚ունեմ ։

121 Սեւ փշին ճիտս եմ քցել ,
Կըրակը սիրտս եմ լցել ,
Էս օր հինգ օր է չեմ տեսել ,
Իմ եարը միտս եմ քցել

122 Ամպել ա ամպա տակին ,
Ծունկս ծնկանդ տակին ,
Ես քեզ ո՞րտեղ սիրեցի ,
Մեխակի ծառի տակին ։

123 Ղօչ եմ բերել սուրբ Մուղնի
Որ մուրազին նա հասնի ,
Հաննավանքն էլ չեմ թողնի
Որ եարս ինձի գտնի ։

124 Մացի ողրալով լալով ,
Գլխիս մազեր փետելով ,
Փետեցի բեխս ու միրուս
Իմ եարիս եաքից լալով ։

125 Թալաքեամէն իր օբէն 15) ,
Տուէք մինթանիս 16) քեօբէն 17),
Մինթանիս քեօբէն լէնա ,
Իմ սիրած աղէն է՛ն ա ։

126 Բաճիս 18) էրէսը նչխուն է ,
Քուրոջս անունը Դչխուն է ,
Ինձի սիրող էրկէն աղէն
Աստուած վկայ չաչխուն է 19) ։

127 Գընում ա, ա՛խ եարս, եարը,
Իմ սկսրոջ մինուճարը 20) ,
Մէրս շատ ա դարդ անում ,
Լալիս ա իր զարարը 21) ,

128 Իմ աղբէրը սարումն ա ,
Շուբն գօտկածալումն ա ,
Աղբէր ջան չուխդ ածա՛ ,
Քիրդ Լօռուայ քարումն ա ։

---

1) Փոքրիկ. — 2) Զարանճի. — 3) Ուղղել. — 4) Կոտրատուիլ, նազ ծախել. — 5) Գոյնզգոյն. — 6) Կարմիր գլխնոց. — 7) Խեղճ, ողորմելի. — 8) Ուտեստի պահեստ. — 9) Հասակակից. — 10) Յակինթ. — 11) Պատիժ. — 12) Մեխակ. — 13) Մաքուր, զուտ. — 14) Կարիճ. — 15) Խումբ, բանակ. — 16) Մի տեսակ մահուդ. — 17) Աստառ. — 18) Կուչիկ. — 19) Անխելք. — 20) Մի հատիկ զաւակ. — 21) Վնաս ։

digitised by A.R.A.R.@

**129** Լուսի լուսնեակը ես եմ,
Ծովերի ձուկը ես եմ,
Գիշերուայ փախնող աղջիկ
Հետիդ ընկերը ես եմ։

**130** Ձեռքդ տուր որ քեզ բռնեմ
Էրեսդ ղալամով քաշեմ
Նա թո՛ղ ճաքի՝ հէրըդ գայ 1)
Ես պըտի քեզի պաչեմ։

**131** Կայնել ես բալ կը քաղես,
Վրէս մարջան կը շաղես,
Լալն ու մարջան չեմ ուզեր
Կուզեմ որ վարդը քաղես։

**132** Եորղանդ երկարել ա,
Երեսդ, գլուխըդ ծածկել ա,
Մի բա՛ց արա, որ տեսնեմ
Կրակը սիրտս վառել ա։

**133** Կանչում եմ եարս չի գալիս,
Հէչ 2) ինձ ջուղաբ չի տալիս,
Վա՛յ քու հէրն էլ անիծեմ,
Քեզ անկողնի մէջ տեսնեմ։

**134** Սաղ տարին ծոմ ու պաս եմ,
Քեզ համար ոսկէ դաս եմ,
Սրտիս միջի դարդերը
Ծառազարդին քեզ կասեմ։

**135** Արաղն բերել ա աւազ,
Գլխիդ ունես ոսկէ մազ,
Ե՛կ, ինձ սիրէ՝, իմ քով ե՛կ,
Բօլ ա ման էկար գեաւազ 3)։

**136** Արեւը կամար կամար,
Կապել ես ոսկէ քամար,
Օսկիդ ընձի չի խաբի
Մնացել եմ եարիս համար։

**137** Կայնել ես էլի դռներ,
Տա՛ր արածէ մեր գառներ,
Քեաֆի՛ր 4), ընձի թողել ես
Գէշի եախէն ես բռնել 5)։

**138** Կարմիր խասա 6) քիսացու,
Սպիտակ կովը մնացու,
Դու իմ հօրը հարսնացու
Ես քու հօրը փեսացու։

**139** Քարիս տակը քարոտ ա,
Պարնի ձիանն արօտ ա,
Թամամ օխտը տարի ա
Քիրն աղբօրը կարօտ ա։

**140** Լուսնակ մտաւ ամպի տակ,
Եարըս կայնել ա քամակ,
Բան ու գործը հատել ա,
Ասում ա. «արի ամաց 7)»։

**141** Քինացել ես եկալ ես,
Վռններդ ցեխումը պուկալ ես 8),
Խելքիդ ղուրպան, ա՛յ տղայ,
Դէօստ ու դիւշման ջոկալ ես։

**142** Խազեր ես շալէ կարէն,
Հըչ չես խարցնէ մըր հալէն 9)
Վըր մինն էլ գաս մըր տունը
Հոգիդ կ'առնեմ մըջ գլխէն։

**143** Գետին էն ղոլը քարքարոտ,
Քաթան շալը ծըլծալոտ,
Աղջի կայնի մէկ պաչեմ,
Ձեր հորթերը տանեմ արօտ։

**144** Պառեկ 10) դէմ էրինք սարին,
Աչքս ընկաւ դիմաց քարին,
Դիւշման մըզի քաշեց սուր,
Էլ եա չը գայ է՛ն տարին։

---

1) Բարկանայ. — 2) Բոլորովին. — 3) Թափառաշրջիկ «աւարա». — 4) Անհաւատ. — 5) Վզից բռնել. — 6) Կտաւի տեսակ. — 7) Բարութիւն. — 8) Ոտները ցեխոտել. — 9) Դրութիւն. — 10) Մէջքը, Թիկունք։

digitised by A.R.A.R.@

**145** Էլ չըկայ օր ու արեւ
Կարաւ մըր անուշ բարեւ,
Աստուած զմէն 1) կուտեսնայ
Նստուկ մըր գլխու վերեւ։

**146** Քոլը քոլին թուշումը 2),
Ծեռնը պիժան կիւշումը,
Իմ եարին ըշտե՛ղ տեսար,
Շուշուայ ղալին թուշումը։

**147** Ոչխարն էլալ ա գիւղը,
Ջոկեցէք ալագէօզը 3).
Իմ հէր քեզ աղջիկ չի տայ
Սրբի էրէսիդ թոզը։

**148** Ախչի էն օր մեռնէիր,
Որ կը մանէիր աւազան,
Արի՛ գնանք մեր խօզան 4)
Քեզի գօվամ զանազան։

**149** Արեւը գընաց մտաւ,
Սիրած սիրածին գտաւ.
Թէզ արա՛, էլի՛ երթանք,
Պահած զատերս փտաւ։

**150** Մտայ եմ գետը, խոր ա,
Ոսկայ հալալին 5) նոր ա,
Ա՛յ նանի, մինն ալ կարի՛,
Ոսկի կոճակնի չարի։

**151** Եշըմ եմ 6) երեւում չի,
Ծառերդ տերեւում չի,
Աչքերս ման եմ ածում,
Էն եարը երեւում չի։

**152** Ծաղիկ եմ քաղել դեղին ա,
Իմ եարը ձեր գեղին ա,
Հել ու մեխակ չատ ունեմ,
Հըրէ՛, եարիս ձեռին ա։

**153** Սիրո՛ւն, էս քեզի նուբար,
Եղի՛ր ընձի սիրահար,
Որ հոգիս տեղում ըլնի,
Քեզի ըլնեմ մի խե՛ղճ եար։

**154** Քամին կանի բոքին տանի,
Ոչխարն թոքին կանի,
Սիրի սիրան հանոզը
Հոգին սատանէն տանի։

**155** Եարս էկաւ էփենք քեարաբ,
Ամենքին կը տամ ջուղաբ,
Քանդի, աւերուի տունը,
Ով մէջ տեղ ընկնի սապապ։

**156** Քաղքէն բերել ես բուլքի,
Հէչ չես աչէ մեր մուլքի,
Ես ո՛րն անեմ ըսէ՛ ինձ,
Քեզի կը գործեմ չուլքի 7)։

**157** Բարակ ճամբէն մտել եմ,
Կորցըրածս գտել եմ,
Սրտիս սիրածն ինձ տուէ՛ք
Մի՛ ասէք թէ փտել եմ։

**158** Եար մ'ունիմ Բուլանուխը
Կարեց ան մըր տան մուխը,
Մօհլաթը 8) անց ա կացեր,
Եարս խօչ 9) եար ա գտեր։

**159** Ջրի վրան սաղ պտի՛,
Իմ էօրտակս ղաղ 10) պտի՛,
Հընչիս ա պէտք բեազի 11) տղան
Իմ եարս նախշուն պտի։

**160** Ախպէր ունիմ աւչի ա,
Մէջքը բարակ ղամչի ա,
Ո՛չ թուր ունի, ոչ թվանգ,
Լեզուովը թալանչի ա։

---

1) Բոլորը. — 2) Թուփը թփի մօտ. — 3) Կարմրաչք. — 4) Քաղած արտ. — 5) Շոր, հանդերձ. — 6) Նայում եմ. — 7) Գուլպայ. — 8) Պայմանաժամ. — 9) Դուրեկան. — 10) Սաղ. — 11) Բեկ.

digitised by A.R.A.R.@

161 Անունդ կարդացող ա,
Աղբէրդ գիր բացող ա,
Մի գի՛րը բաց անել տուր
Տեսնե՛նք ո՞նց իմացող ա։

162 Ջաղացիս ջուրը կանաչ,
Դուրս կուգաս ամանչ-ամանչ,
Ջուխտ ու կենտ կապիդ մեռնիմ
Մինն ալ ա, մինն կանանչ։

163 Թէջ 1) եմ արել մաղըմ եմ,
Ձեռքէդ բռնել խաղըմ եմ,
Նստողներ լա՛ւ սէյր արէք 2),
Սաւդաքեարին դաղեր եմ։

164 Տանս տակը շըլորի,
Ճղերը ետ օլորի,
Էրնէկ կը տամ էն քըւոր
Օխտն աղբօր Թագն բոլորի։

165 Բլբուլի պէս եար ունիմ,
Գըլխուց սար ալ ունիմ,
Աստուած էնոր օր չը տայ,
Լեաչակ պատրած տալ ունիմ։

166 Թխպալ ա թոր 3) չի կէալի,
Մթնել ա տուն չի կէալի,
Տեղ եմ ցկալ 4), պէարց 5) դըռալ
Աչքերս քուն չի կէալի։

167 Սանրածս ոսկէ մազ ա,
Հագինս կապուտ խազ 6) ա,
Բուզման 7) դցած ախալըխ
Բեզի կը տամ Թաւազա 8)։

168 Մեր դրան մօտ կայնել ես,
Թամամ զանկլէն տարել ես 9),
Բեզ չեմ ուզի չուր 10) էն վախտը
Թագս աղլուխ չը բերես։

169 Վարդ եմ քցել մեր բաղը,
Բաղաջ չինել չարմաղը,
Բոստանս՛ քու մի աչքը
Մոռայար հացն ու աղը։

170 Մեր արտը հէրդ վարեց,
Քեաթիպէդ 11) դերձիկ կարեց,
Աչք ու ունքով իշմարըդ 12)
Ինձի ջանդահան 13) արեց։

171 Բահն էր ուսին դըրած,
Թաւշադն էր 14) ոսկեջրած,
Աչքը ունքիդ հովարած,
Խիստ էր ռանգդ 15) թռած։

172 Ծրաւալ ամ ճիւր պիրէ՛ք,
Ըսպահանու հուն պիրէ՛ք,
Կը մեռնիմ էս ղարիպ 15) տեղը,
Ղարիպ ղուշս տուս պիրէ՛ք։

173 Տուն ու դուռը աւլեցի,
Սեղանս պատրաստեցի,
Էկաւ իմ սիրած եարըս
Էլայ կողքը նստեցի։

174 Համբարձում մեր դուռ հասաւ,
Ջանէլներ ձեր օրը հասաւ,
Էրնէկ տամ ձեր սրտերին,
Եարըս ընձի բան չ՚ասաւ։

175 Գեամ ա 16), գեամ ա իմ եարը,
Բոլերով ա գեամ վարը,
Հոգիս հոգուն եմ ղուրպան
Անուշ ա սիրած եարը։

176 Ծառ եմ անկել քիրազի,
Գիշեր քընայ երազի,
Ընկերտիք Աստուա՛ծ կանչէք
Ես էլ հասնե՛մ մուրազի։

---

1) Ցորենի կոյս։ — 2) Նայեցէք։ — 3) Անձրեւ։ — 4) Գցել։ — 5) Բարձ։ — 6) Կապոյտ գծով։ — 7) Ոսկեթել։ — 8) Նուէր։ — 9) Զանձրացնել։ — 10) Մինչեւ։ — 11) Կանացի կաչէ վերարկու։ — 12) Նըշանարկ։ — 13) Ուժաթափ։ — 14) Գոյն։ — 15) ա. օտար. բ. պանդուխտ։

digitised by A.R.A.R.@

177 Նարս եար ա ու մարալ ,
Ստեղծուել ա ընձի համար,
Ո՛վ որ կուզէ թո՛ղ խօսի ,
Նայ ա սրտիս սիրահար ։

178 Տանս տակը աղ մոշի ,
Օխտը տարի եար եշի ,
Աջամհատ ըստհէնց պանկըլնի,
Եարն ալ կը տա՞ն ուրիշի ։

179 Սոխ ա բսել դաշտումը ,
Ջուր են լցրել տաշտումը ,
Բերէ՛ք եարիս լողացնեմ ,
Կուզէք ինձ դրէք նաշումը ։

180 Քաղքի եարը քահրըբար ,
Իմ բոյ, քու բոյ բարաբար 1),
Խնձորը քցեմ , ե՛կ , տա՛ր ,
Դու ալ դառար բէհզըբար 2) ։

181 Քեզ մեղք չ՚ունես, անմեղ ես ,
Մեր գեղին գեադի 3) տեղ ես ,
Հայի լեզու չես գիտում
Փէտը ձեռքիդ հոտաղ ես ։

182 Ջան գիւլում կասեմ կը շարեմ,
Տոպրակը կածեմ կը կարեմ ,
Կարէ-կտուր ման կը գամ
Քանց քեզ յաւը կը ճարեմ ։

183 Ո՛չ վարդ կուզեմ, ո՛չ շուշան,
Ո՛չ Մոզնի , ո՛չ ա. Նշան ,
Թէ եարըս ինձ սիրում ա,
Բոլորին կըլնեմ ղուրպան ։

184 Կանչ տայ գայի աղբիւր ,
Թասը տուի տայ պաղ ջուր ,
Հէր ու մէր աչքերդ կոյր ,
Տըղին տես աղջիկդ տա՛ւր ։

185 Սհէնց նիեր հանդերը ,
Թաղ արծաթի քէանդերը ,
Դանակ պտի սիրտս ճղենք
Շարուէ չարան դարտերը ։

186 Էս օրս ի՞նչ օր ա, օր ա,
Եարիս համար ինչ օր ա ,
Ո՛չ ծնողք ունինք, ո՛չ ազիզ,
Էրկուսիս բանը նո՛ր ա ։

187 Թառամել ա իմ վարդը ,
Մեռել ա սիրած մարդը ,
Էն օրից էլ սկսած
Էլ չ՚եմ քաշել իմ դա՛րդը ։

188 Ախչի՛ անունդ Թագուն ,
Նստեր ես հօրդ սաքուն ,
Ի՞նչ չինարի բոյ ունիս ,
Երանի եարիդ հոգուն ։

189 Տէրտէրը օրհնէ ձեր տուն ,
Աստուած օրհնէ ձեր մեծ բուն ,
Սիրածիս լաւ մեծացրէք
Ինչըու ես տանեմ մեր տուն ։

190 Եար ջան քշերով արի՛,
Կոյքի պատերովը արի՛,
Թէ որ տեսնող էլ ըլնի
Դու գլա ընձի արի՛ ։

191 Իմ գիւլումը քաղած ա ,
Պանձր սարին կէաղած ա ,
Հով վեր իմ գիւլումիս տեղն տար,
Հէրը , ախպէրը թաղած ա ։

192 Արագն անցայ ես լալով ,
Եարիս վրայ ողբալով ,
Եարիս տարան քրդերը
Քշերն անից գողնալով ։

193 Կը գնամ Ուշի . Օշական ,
Աշտարակն ու Բիւրական .
Կը մանգամ ես տընէ տուն ,
Կը գտնեմ մի սիրական ։

194 Սիրել եմ սիրած եարը ,
Գեղի մեծ գիւքեանդարը 4) ,
Նա էլ ընձի՛ կը սիրէ ,
Գիդա գեղի բազարը ։

1) Հաւասար . — 2) Թափառաշրջիկ . — 3) ա. Ծառա . բ. անմիտ երիտասարդ . — 4) Խանութպան ։

digitised by A.R.A.R.@

195 Սարի խոտը ծեղ-ծեղ ,
Ախպէր գընանք մին տեղ ,
Որ կեօղերը վըրայ տան
Գլուխըս գնեմ գլխիդ տեղ ։

196 Վերմակդ վըրէդ ես քաշել ,
Երեսըդ ղալմով նախշել ,
Այրուէ քու սիրտն ու արեւ
Քանի՞ ինձպէս ես խաշել ։

197 Բան եմ քցել բան կաննեմ ,
Շաբաթը բիթուն 1) բան կաննեմ ,
Աղիզիս ինձի տուէք
Գլուխը ոսկէ չար կաննեմ ։

198 Մէր ես հէչըմ ռահմ 2) չ'ունիս ,
Ենգի 3) եարիս վարդ չ'ունիս ,
Եկել քու դուռ եմ ընկել ,
Հէչ դու մօր ջիգեար 4) չունիս ։

199 Շողքը ընկեց մեր պատին ,
Արքայութիւն իմ տատին ,
Վօգիտ 5) էրվի ա՛յ ատաի ,
Ինձ խի՞ 6) տվար չոլախի 7) ,

200 Մէ եար ունիմ նազընչյար 8) ,
Իմ սիրտ կըրակ , էնոր քար ,
Արի էրեսիդ պաչեմ ,
Ծնուել ես ընձի համար ։

201 Փռուած է նախշուն խալը 9) ,
Եկել ա մեր մարալը ,
Աղբեր ջան դու խօսք արա՛ ,
Հարցրու իմ եարիս հալը ։

202 Էկէք քինանք էն օխը ,
Գիւլպատադին կիլօխը ,
Ամեն ծառան մին փշատ ,
Իմ եարին էօմրը 10) շատ ։

203 Ծաղիկ ունիմ նարընջի ,
Բերին եարիս եափընջի ,
Էն եարին ես չե՛մ ուզէ ,
Որ ման կիգայ խաւընջի 11) ։

204 Մուխ ա ելնում է՛ն զօլից 12) ,
Ջուր ա գալիս էն գեօլից ,
Ա՛յ ջուր , թէ եարիս տեսնես
Մէկ մէկ ասա՛ իմ հալից ։

205 Սիրտդ պինդ ա քարիցը ,
Հարցըրել եմ սարիցը ,
Հոգիս եկել կպել ա
Էգ քու սեւ ջիգեարիցը ։

206 Ալամ աշխարհը գիտա ,
Որ նա իմ սիրած եար ա ,
Էլ ինչ սաղմոս , յասմաւուրք ,
Նա ամենից խաբար ա 13) ։

207 Ա՛յ հար արա՛ 14) , հար արա՛ ,
Ոսկէ քեանքիւլդ եր արա՛ ,
Իմ հէր քեզ աղջիկ չի տալ ,
Գլխիդ վախտին ճար արա՛ ։

208 Գնտիկ մնտիկ գնտանոց ,
Մանտր թփեր երսընոց ,
Բաց կոճկընեբ գամ քու ծոց
Ազապ 15) տըղին դարտ ու խոց ։

209 Գեղին բոլոր չիման 16) ա ,
Ձորս բոլորը տուման 17) ա ,
Ախչի՛ , արի փախցընեմ ,
Հէրդ ու մէրդ չ'իմանայ ։

210 Մէրս արաւ ձուաձեղ ,
Վըրէն լցրեց լիքը եղ ,
Տեսաւ փեսէն տուն չեկաւ ,
Կատուն կերաւ փեսի տեղ ։

---

1) Բոլոր · — 2) Գութ · — 3) Ուշ եկող · — 4) Գութ , սիրտ · — 5) Հոգիդ · — 6) Ինչո՞ւ · — 7) Կաղ · — 8) Տուն ներկող՝ նախշող · — 9) Կարպետ · — 10) Կեանք=ումբր · — 11) Թափառաշրջիկ · — 12) Կող-մից · — 13) Տեղեակ է · — 14) Կանչի՛ր · — 15) Չ'պսակուած · — 16) Կանաչ · — 17) Մառախուղ ։

digitised by A.R.A.R.@

211 Ա՛յ օրօն օրօն ծաղիկ,
Կարմիր ու տօրօն ծաղիկ.
Այվալայ խալխ եմ կիտել
Էն էլ քեզ օրօն ծաղիկ։

212 Գնացի ճուրը ճրագով,
Մէջքիս տուրին ուրաքով,
Իմ մօր իմ հօր ինչ տեսեմ,
Ինձ խե՞ տուրին կըրակով։

213 Բաղըմ ունիմ ղամուշ է 1),
Միջի մէյվէն 2) անուշ է,
Մի՛ք մեզ դըրի մէր ու քուր
Սրտով սիրածն անուշ է։

214 Շիմշիր դդալ Շիրվանի,
Քամին թել թել կը տանի,
Մի՛ք մեզ դըրի մարիկներ,
Էս սէր հոսման կը տանի։

215 Վարդավառը հասել ա.
Բան ու գործս թարսել ա,
Թէ սիրել ես ջուր չաղ տուր
Կրակս թէժացել ա։

216 Սիւեր կեռ ու կամար
Ես մեռնիմ քեզի համար.
Օխտը տարի դիմացայ
Մինակ քու խաթեր համար։

217 Փոցխըս ծիրանի կոթ է.
Սիրտըս եարալու խոց է.
Սիրտըս սրտումըդ պտի.
Գիտեննաս սաւդէն ոնց է։

218 Ձեր բաղի դուռը բաց ա,
Ոտներդ չաղով թաց ա,
Եարիցդ հեռացել ես
Աչքերդ լիքը լաց ա։

219 Շողքը տուաւ էն պատին,
Մէջքը կոտրի իմ տատին,
Հարուստ տեղը տեղ թողեց,
Ինձ տուեց էս աղքատին։

220 Վարդ քցի, ձեռնով բռնեմ,
Եարալու սրտիդ մեռնիմ,
Քեօլկիցը 3) մի՛ դուս արի,
Բալքի 4) հաւասս առնեմ։

221 Հերթը մերն է ջուր բերենք,
Մեր սիրունին տուն բերենք,
Թէ որ եարս նազ անի
Կապած ձեռներով բերենք։

222 Թորկեր եմ 5) իմ եարը,
Իմ սրտի սիրահարը.
Սաման էս ի՛նչ բէրաղդ եմ
Կորցրել եմ իմ եարը։

223 Ուռի ես կտանալ մի.
Մեր դանէն հեռանալ մի,
Ջահել ես, ջահել մնաս.
Ասում եմ ծերանալ մի։

224 Առաւօտուն ժամ կ'ասեն,
Տէրտէրները տաղ կ'ասեն.
Եար ջան հուջաթ 6) մի ըլնի
Խըմի՛ր իմ գինու թասէն։

225 Քօլերըն բռնել ա ձուն
Կը քանդես դու մեր տուն
Ես ի՛նչ ըրի մէ ըսա՛,
Աղջիկդ տուի՛ր քեաֆիրուն։

226 Հի՛նչ անեմ, հընչիս դարտ այ,
Կարան սաղիս փարդայ 7).
Աչըղ չի՛ աչըղ դառայ
Եարալու եարիս դարտ այ։

227 Համբարձում օրն ա գալում,
Եարըս մնացել ա սարում,
Եար ջան նշան կը դընեմ
Համբարձման օր՝ «Ջան-Գիւլում»։

228 Ախչի անունդ Շուշան,
Ճերմակ բուխաղ 8) թուխ նշան,
Ես քու եարդ տեսել եմ
Ձեռքը ծոցին փոշիման 9)։

1) Եղեգն. — 2) Պտուղ. — 3) Հով տեղ. — 4) Թերեւս. — 5) Թողել եմ. — 6) Հակառակութիւն. — 7) Լար. — 8) Ծնօտի վերին մասը. — 9) Զղջալ։

digitised by A.R.A.R.@

229 Ալ քօղով հարսներ տարան
Մընք մացինք գիլու բերան.
Մըր ճժերն 1) ու աղջիկներ
Ջընք գինա գորի՞ 2) կորան։

230 Կարբի ընկել ա հովը,
Եարըս ընկել ա ծովը,
Աստուա՛ծ սիրէք ջահիլներ,
Ինձ ցցեցէք եարիս քովը։

231 Հէր ես հէրութիւն արա՛,
Մէր ես մէրութիւն արա՛,
Թէ աղջիկդ ընձի չես տայ
Սրտիս մի հաւար 3) արա՛։

232 Կարի՛ճ, Թեւերդի քշտէ 4),
Շուն չէխի կողէն բշտէ 5),
Մէնծ ու պզտիկ խըտ հիտրաց 6)
Դու մէկ դըրբով կորշտէ 7)։

233 Բոխչայ 8) բանար եմ կապալ,
Աղ ու գհար 9) եմ կապալ.
Ես էն եարին հաւան չիմ
Օժու վըրայ են կապալ։

234 Կայնել ես կանաչ տափին,
Առուի դրադի 10) ափին,
Իշալլա 11) մեր չար կամի
Թեւերը պըտի թափին։

235 Եարս մտու էն գոնով,
Նշան արաւ ինձ կոնով,
Եղնից քնացի թէ բռնեմ,
Ելաւ փախաւ միւս գոնով։

236 Ընձի կասեն տիրացո՛ւ,
Խօսքով ընձի մը լացո՛ւ,
Աշխարք ընձի նահատկեն
Խօսքով ընձի դու իմցո՛ւ

237 Կայնել ես պատին տակը,
Ցոլայ կը մատնուդ ակը,
Իմ կարած արախչինս 12)
Դրել ես ֆասիդ տակը։

238 Ջափարի պատմա կոխել մի՛,
Շահին ղալպա 13) փոխել մի՛,
Իմ հար քեզ աղջիկ չի՛ տայ,
Քեօնկիլն իմ ա, վախիլ մի՛։

239 Աշխարքի խօսքը ի՞նչ ա,
Գէշ մարդու ասածն ի՞նչ ա,
Ես սիրեցի ես կ'առնեմ
Էլ ձեր խօսալը ի՞նչ ա։

240 Արագի ջուրն ի՞նչ կանեմ,
Ասկեար, քիշմիշ 14) ի՞նչ կանեմ
Սեւեր կապած կը մընամ
Ես իմ եարին կը ճարեմ։

241 Կողքայ սարը ղօշայ է,
Միջի մարդը բօշայ է 15),
Մաշիկ 16) ավէք դուս յելնեմ
Ինձ էլ չ'առեն բօշայ է։

242 Աղիղիս կանչէ՛ք չուտ գայ,
Սրտիս եարիս դարմանն տայ,
Գնացէ՛ք ասէ՛ք հօրս ու մօրս
Թէ ձեզ եղել եմ փեսայ։

243 Ջըրի ճամփէն ա՛լ կանեմ,
Սպիտակ երես քալ կանեմ,
Շան աղայ չատ մի՛ հաչա,
Քեզի հալ ու մաշ կ'անեմ։

244 Արազ խօսի՛՝ լեզու ա՛ռ,
Դու իմ եարիս խաբար տա՛ր,
Ասա՛. «ես հալ մաշ եղայ»,
Տուտով արի՛ ձեր տուն տա՛ր։

---

1) Երեխայ. — 2) Ո՞ր կողմ. — 3) Օգնութիւն. — 4) Ետ քաշէ. — 5) Խփի՛ր. — 6) Միասին. — 7) Կոտրել, խողխողել. — 8) Կապոց. — 9) Մի տեսակ բանջար. — 10) Կողքի. — 11) Յոյս Աստուած. — 12) Մի տեսակ հայկական գլխարկ. — 13) Կեղծ. — 14) Խաղողի տեսակներ. — 15) ա. Մի սրոչ ժողովուրդ-ցիգաններ. բ. սեւ երես ունեցող գ. անպէտք. — 16) Կօշիկ։

digitised by A.R.A.R.@

**245** Եարս մի գիւքեանտար է ,
Ասածըս մինուճար է ,
Բոյ բուսաթով 1) մի ջիւան
Ինձ սիրուն սիրահար է ։

**246** Էս սարը բարձըր սար է ,
Ժամ էն կանգնել սեւ քար է ,
Եարս՝ աղբօրս բարեկար
Էս մեր գեղի ռանչպարէ 2) ։

**247** Է՛սա կոխեց մութ գիշեր ,
Ձէնը կտրել էն ղըշեր ,
Ով ինչ կուզէ թո՛ղ ասէ
Ես կը պաչեմ քո թշեր ։

**248** Բոստանը ջրած տեղը ,
Ասեղը թելած տեղը ,
Խաբար տարէք իմ եարին
Հէն եմ իրան գրած տեղը ։

**249** Ես իմ եարիս կը բերեմ
Խալխի աչքը կը կապեմ ,
Խանն էլ որ նրան տանի
Ընգօր դուռն էլ կը թակեմ ։

**250** Ա՛ աղայ անունդ ի՞նչ ա ,
Շա՛ն աղայ գաւէդ 3) ի՞նչ ա ,
Կերթամ կ'առնեմ ղըզըլբաշ ,
Բոյովըդ կտրեմ ղումաշ 4) ։

**251** Բարձ ըմ ունիմ ապրեշում ,
Կաշեմ ինչըրու իրիկուն ,
Որ եարըս գայ մեր տունը
Շուտ տանք էնոր քունը ։

**252** Սարերը ձիւն կալալ ա ,
Արեւ արայ հալալ ա ,
Ջալում Գեանջեցի աղջիկ
Դարդերն ինձ կալալ ա ։

**253** Սարէն կելլէր էրկու մուխ ,
Մէկը հընկաւ , մէկը ծուխ ,
Էրկու գիզալ 5) եմ սիրէ ,
Մէկը չէկլիկ մէկը թուխ ։

**254** Խալխի ադաթը 6) էս ա ,
Է՛ս դեռ խօսածի կէս ա ,
Ամեն տանը է՛ն կ'ասեն՝
Թէ ես եմ ձեր տան փեսայ ։

**255** Վարդավառը մօտ ա ,
Մեր ճամբէնը քարոտ ա ,
Գընում եմ եարիս տեսնեմ
Կ'ասեն ընձի կարօտ ա ։

**256** Լուսնեակն է կայնել դարին ,
Պատկերքն է քու պատկերքին ,
Լուսնեակ ջան թէզ մի՛ էրթա
Ջուր մէկ էլ՝ գալող տարին ։

**257** Ջուր եմ գնում ջուր բերեմ ,
Ազիզիս էլ տուն բերեմ ,
Աշխարքին էլ ցոյց կը տամ
Երբ իմ եարիս տուն բերեմ ։

**258** Ամպել ա օրը սեւ ա ,
Ղուշն ա անցնում անթեւ ա ,
Ես մի զօռ 7) եար ճարեցի ,
Էն էլ ասում են , խեւ ա 8) ։

**259** Սէլը եկաւ ցորենով ,
Ես մընացի քու ապով 9) ,
Աստօծ տունըդ չը քանդէ
Դու չես գալիս օրերով ։

**260** Սարէն ե՛ս գամ , ձորէն դու ,
Հարսն ե՛ս սիրեմ , կեսուրը դու ,
Տունն ե՛ս քնեմ , կտուրը դու ,
Սերն ես ուտեմ , մածունը դու ։

---

1) Հասակ ու կազմուածքը . — 2) Երկրագործ . — 3) Կռիւ , վէճ . — 4) Կերպաս . — 5) Գեղեցիկ . — 6) Սովորոյթ . — 7) Կարիճ . — 8) Անխելք , գիժ . — 9) Ցուսով ։

digitised by A.R.A.R.@

**261** Իմ եարը նոր ա եկալ,
Սարերին քոն ա եկալ,
Թող ա եկալ թողալ չի,
Եափունչին չոր ա եկալ։

**262** Աստղդ փայլեց երկնքում,
Քո սէրդ ընկաւ իմ սրտում,
Արի՛, իմ խօսքը լսի՛ր,
Որ չը մնամ ես կտտում։

**263** Փալաք 1) զարկեց սրտիս նետ,
Արտըսունքս էզաւ գետ,
Ա՛յ ախչի՛, քու հոգուն մատաղ,
Ինձ էլ չե՞ս տանի քու հետ։

**264** Գընացի սարը սնձի,
Ոտըս առաւ մէկ սնձի,
Տեփա՛ն, միրուքդ խանձի՛,
Չը ավլիր Սօփոն ընձի։

**265** Կարմիր մեղարով 2) աղջի՛կ,
Գինդ հազարով աղջիկ,
Նշխուն մեզար ղըրմըզի 3),
Պատուիս չըմ տանի՛ վըզի։

**266** Ես կէօրիսի ծօրան եմ 4),
Մեծ բաղին խնձորան եմ,
Խաբար տարէք իմ եարին
Օլքայ օլքայ կօրալ եմ։

**267** Ժամի բոլոր աւազ ա,
Ուստա՛, ջուբբէդ գիւվազ ա 5).
Ժամը չինէ՛, գըլուխ բե՛ր,
Վանքը մեզի մուրազ ա։

**268** Գալըդ մէրըդ չ'իմանայ
Քեզի խայտառակ կանայ,
Ախչի՛, դու ու քու Աստուած,
Ընձի սե՛ս յետոյ գընա՛։

**269** Ա՛խ էնէմ արուն գուգայ,
Սեւ սրտիս զարուն գուգայ,
Ի՞նչ էնեմ էնպէս եարը
Պըտըտուի տարուն գուգայ։

**270** Ախչի իշկայ 6) էն դղին,
Հարս ու կեսուր բուրդ կզին,
Սիրած սիրածին չեն տայ,
Մեղքը հօր ու մօր վզին։

**271** Նոր եմ եկել հնձանից,
Դու մի փախչի ինձանից,
Ձեր տունը Աստուած քանդի,
Թէ որ փախչես ինձանից։

**272** Հով այվանում 7) քընել ես,
Սալամ 8) կաքաւ բունել ես,
Վարդի ջուրը կաթաց վրէզ,
Իմացար թէ քընել ես։

**273** Ախչի տունը լվացիր,
Եարդ մեռաւ չը լացիր,
Թաժայ 9) եարըդ տուն եկաւ
Ճերմակ գեօքսըդ 10) բացիր։

**274** Դուշ ընեմ զամ ձեր բաղը,
Ուտեմ ձեր հացն ու աղը,
Աստուած սիրես մի՛ պահի
Ինձանից խօսքի սաղը։

**275** Մեծ արտուտը ղուշ կընի,
Ցորտ աղբուրին թուշ կընի,
Եարը եարին տեսնալով
Գիւլը աչըլմիշ կընի։

**276** Զատկէն առել եմ քեզ «Եա՛ր»,
Բերել եմ օսկէ քեամար,
Քու աղբօր հէրն անիծած
Քեզ կուզէ եադի 11) համար։

**277** Ջուր ա գալիս լափ տալէն,
Երկու խնձոր ծափ տալէն,
Հըրէս եկաւ իմ եարը
Թուխ զզակը թափ տալէն։

**278** Կայնե գուռը դողըմ ա,
Սազաֆի պէս շողըմ ա,
Ո՛չ ջուզաբը տալըմ ա,
Ինձ էլ ձեռաց թողըմ ա։

---

1) Աշխարհ. — 2) Գոգնոց. — 3) Կարմիր. — 4) Զօրիցն եմ. — 5) Վարդագոյն. — 6) Նայի՛ր. — 7) Հով տեղ ծառներով շրջապատած. — 8) Ողջ. — 9) Նոր. — 10) Կուրծք. — 11) Օտար, ուրիշ.

digitised by A.R.A.R.@

279 Բաղի բոլորը պատ ա,
Մէ խօսքըդ ընձի չատ ա,
Աստծու առաջին կարենք
Մինչեւ համբարձում վաղա 1)։

280 Կը կաղնեմ կէարին քարին,
Գիր կը գրեմ Նազլու եարին,
Հա՛մ կը գրեմ հա՛մ կը ճնչեմ,
Աղու կարի ըսաէնց տարին։

281 Էրեւանը դուքեան դուքեան
Ճերմակ չիչու բստաքան 2),
Ես իմ եարը սիրեցի,
Դիւշմընները տրաքան։

282 Սարի սիրուն նարգիզ եմ,
Տուտի 3) եմ էրկէն վիզ եմ,
Շատ ջահիլների միջից
Սրտով սիրածիս կ'ուզեմ։

283 Ախով սիրտս վառեցաւ,
Ալ արունս սառեցաւ,
Անխիղճ մի ըլլի իմ եար
Սաղ աչքերըս պաղեցաւ։

284 Մի բարձ եմ արել ի՛մն ա,
Մինն էլ եմ արել ի՛մն ա,
Գեանջու քարվան գալիս ա,
Միջի թաւագըն 4) իմն ա։

285 Ընկած տեղից վերցրո՛ւ,
Ինձ ծոցի պէս թացրո՛ւ,
Բունումդ ձուաձեղ արա՛,
Մի քե՛օլկա տեղ 5) կերցրու։

286 Հանդէն գաս գեղը մանես,
Իմ քցած տեղը մանես,
Ընձէն գիւման 6) եար բռնես,
Բէմուրվաթ 7) հողը մտնես։

287 Կը կաղնեմ սոնա քարին,
Կը նշեմ Բաքվայ սարին,
Ա՛յ Բաքուայ խաղայիններ,
Օղարկեցէք թէլլու 8) եարին։

288 Կայներ ես կաժ 9) կը մանես,
Արեգակի նման ես,
Իջի ըստուց դէն դընայ
Շատ մարդ գլխուց կը հանես։

289 Լա՛ւ աղջիկ ես քուր չ'ունես,
Հագից կուռտուշկայ 10) չունես,
Գընա՛, կորի՛ սեւ երես
Ցերեսից ապուռ չ'ունես։

290 Առուները համամ է 11),
Ենգի բիլուր չամամ է,
Ես է՛ն աղջըկան կ'առնեմ,
Որի անունը Թամամ է։

291 Գեաըն եմ գըրալ կաշի,
Աչքս բազար կը եշի,
Ջերան 12) իմ եարի կեալը
Հալալ կէսս կը մաշի։

292 Միթկալ 13) չապիկ կարեր եմ,
Դոշին 14) կոճակ չարեր եմ,
Հինը մաքէս հաներ եմ
Քեզի թաժայ ճարեր եմ։

293 Ես աղջիկ եմ գիւղ կ'ուզեմ,
Ճակտիս դեղին փուլ 15) կ'ուզեմ,
Էն էլ մէկ մէկ հատ օսկի,
Էն էլ ես բէտ բէտ 16) կ'ուզեմ։

294 Ա՛յ օրօն օրօն ծաղիկ,
Կարմիր ու տօրօն ծաղիկ,
Տարէնը մի հետ կը գաս,
Գամ քեզ օրօն ա՛յ ծաղիկ։

---

1) Ժամանակամիջոց. — 2) Բաժակ. — 3) Թութակ. — 4) Ազնըւական, իշխան. 5) Հով տեղ. — 6) Ցուսալի. — 7) Նպատակից զըրկուած. — 8) Վայելչահասակ. — 9) Մանելու գործիք, որով թել են պատրաստում ձեռքով ոլորելով. — 10) Կանացի կարճ բաճկոն. — 11) Բաղանիք. — 12) Մինչեւ. — 13) Կտաւ. — 14) Կուրծք. — 15) Փող. — 16) Մեծ մեծ։

digitised by A.R.A.R.@

295 Ծառի գլխին սեւ ղշեր 1) ,
Դեռ չի հասել մեր Նշեր .
Ախչի՛ , հայլին ա՛ռ , իշկա՛ ,
Ի՛նչ կարմիր ա քո թշեր ։

296 Կաքաւը սուլուլ 2) կը տայ ,
Կնճիթը տիւրուր կը տայ ,
Հուր 3) վոր մին եար չի ունի
Օնքերը իւրուր 4) կը տայ ։

297 Ջէյրան ընկել է ձորը ,
Խաբար ղըկեցէք մօրը ,
Կամ թո՛ղ ձագին ազատէ ,
Կամ սուրը խըրէ փորը ։

298 Ախչի՛ , գոնից գո՛ւրս արի ,
Ինձ չիկին 5) թառլիկ 6) կարի,
Երբ որ գըլուխըս դընեմ ,
Ուրախացի՛ , մա՛ն արի ։

299 Բուխէրիկը 7) վառել ա ,
Աֆքեարըդ ինձ առել ա,
Կա՞ն որ քեզի սիրել եմ
Ուշք ու միտքըս դառել ա ։

300 Երկինքը կամար կապեց ,
Սեւ մազերըս ապիտակեց,
Փիս մարդի սառ խօսքերը
Քեզ ինձանից շուտ ջոկեց ։

301 Բուրդը քոչեց՝ տո՛ւն չ'ունի ,
Սիրտս բըլաւ՝ սո՛ւն չ'ունի,
Սիրտ ըսածըդ չիշայ 8) է
Որ կոտրա՛ւ էլ խէր չ'ունի ։

302 Ինչ որ ասեմ չի լսի ,
Կայնել դուռը կը մնայ ,
Գընաց տա՛ւ ախմախին ,
Օրը հինգ դան 9) կը փոսի 10) ։

303 Նալն 11) ու մեխը կրակումը,
Սուլան ճոթը մկրատումը ,
Սէրը սիրածան հանողին ,
Թաքը թխոցի դրասումը ։

304 Անձրեւ արի՛՝ գեօլ արա՛,
Ղըսմաթներըս բօլ արա՛,
Եարըս՝ որ կոնից կ'ուզես
Դիպա մեր տուն թօլ արա՛ 12) ։

305 Փող ես ուզում քեզ փող տամ,
Ոսկի տամ , ո՛չ թէ հող տամ ,
Թէ դրան էլ ղայիլ 13) չես ,
Հոգիս հանեմ քեզ փոխ տամ ։

306 Սուրբ Կարապետ ուխտ կանեմ ,
Ծամերըս ջուխտ-ջուխտ կ'անեմ
Իմանամ ինձ չես տանի
Կերթամ մօլլին թուղթ կանեմ ։

307 Կանաչ են ա՛խ սար ու ձոր,
Ջէնըս բարակ , սիրտըս խոր ,
Հոգիս էլ տամ չես լսիլ,
Ի՞նչ ես ընկել սար ու ձոր ։

308 Աջա՛բ 14) ե՞փ պիտի լինի ,
Որ բուճ 15) անեմ իմ եարի ,
Կանաչ կարմիրը կապած
Աշխար թողամ զարմացած ։

309 Արեւը սարին երան 16)
Մըմուանը 17) քարին երան ,
Մին թեւաւոր ղուշ պտի
Իմ սիրած եարին երան ։

310 Պատին մէջը պատ չիլլի ,
Գեղին մէջը սար չիլլի ,
Ախչի՛ , խելքըդ քեզ ժողվէ
Քու ըսածդ լաւ չիլլի ։

---

1) Թռչուններ . — 2) Պտոյտ . — 3) Ով որ . — 4) Իրար . — 5) Մի տեսակ կերպաս . — 6) Գլխարկ . — 7) Վառարան . — 8) Ապակի . — 9) Անգամ . — 10) Բարկանայ . — 11) Պայտ . — 12) Դարձրու . — 13) Յօժար . — 14) Արդեօք . — 15) Գուլպայ . — 16) Վրայ . — 17) Մոմու՞

digitised by A.R.A.R.@

311 Գլուխըս դըրել եմ քարին
Սիրտըս լիք ա արին ,
Եարիս էփած մայլամը 1)
Դըրէք իմ սըրտի եարին ։

312 Մեռնիմ քու Թըշի խալին ,
Հագինդ կարմիր ալ վալին ,
Հօրըդ սեխին 2) մի՛ եչէ ,
Փալէ՛ ինձ ե՛կ էս տարին ։

313 Գնա՛, ոչխարը կըԹի՛,
Օճօրքի 3) տակ մի՛ փըԹի ,
Քիրըս զարկեմ ձեր տունը
Մի էրկու փինջան 4) կաԹի ։

314 Ղարսայ մերգը փըլել ա ,
Եարս տակին քնել ա ,
Աբէ՛ր օգնուԹեան հասիր
Իմ օրը խաւարել ա ։

315 Ջին դուռը կապած տեսայ ,
Կրակը վառած տեսայ ,
Եարըս գոնիցը անցաւ
Զաքմանը 5) պատառած տեսայ ։

316 Դէզ եմ պըրել հաւան չեմ,
Ես իմ գլխին դիւան 6) չեմ,
Ինձ օխչարամորԹ անէք,
Ես էն ըրդին հաւան չեմ ։

317 Արազ Նըզանում գեամին 7),
Գեօքսիս ա տալիս քամին ,
Ես մի զարիբ ծա՛ն ունեմ
ՀասրաԹ 8) եմ ծոցի համին ։

318 Փնացել ես եկալ ես ,
Տըրեխներդ կոկալ ես ,
Ջեռիդ ճպատին 9) մատաղ
Գառնը մօրան ճօկալ ես ։

319 ԵԹում 10) եմ հէր-մէր չունիմ,
Ուրիշի հետ սէր չ՚ունիմ,
Քեզնից զիւման եար չ՚ունիմ ,
Գլխիս ուրիշ տէր չ՚ունեմ ։

320 Կապոյտ քիրաճած 11) տներ ,
Մէջը կայ սսկի սներ ,
Սարէն Թափան աղջկներ ,
Կ՚լմանին կատղած շներ ։

321 Իմ եարը էլաւ գընաց ,
Դարին դէմ դէմ տաաւ՝ մընաց ,
Հալալ ԹողուԹիւն չ՚էրի ,
Սրտիս դաղ եղաւ գընաց ։

322 Ընկել եմ ա՛խ սարէ սար ,
Դաման չ՚ունիմ՝ ո՛չ մի ճար ,
Ուզում եմ դալ քու տաքը
Առաջըս ծով սար է սար ։

323 Անհանգիստ ծիծեռնակ ես ,
Դու քո ջանին կրակ ես ,
Շատ էլ մի հպարտացի
Մէ ծառայող մշակ ես ։

324 Էլի՛, կանի աղաչա՛,
Պապու ծառներ կանաչ ա ,
Մէկն ա հըզի մէկ Թըի ,
Մէկ Աստուած պահա՛ քըզի ։

325 Աղջիկը քնաց կալաւը ,
Պապզի տուաւ հալաւը
Օզեց որ յետ եչի ·
Նշանածն ընկաւ կոլաւը ։

326 Կայնել ես նաւի վըրէն ,
Ջինարի ծառի վըրէն ,
Կարմիր ֆասդ Թեքել ես ,
Շէկլիկ քեանքուլիդ վըրէն ։

327 Ես քու սիրուդ վառել եմ ,
Վաճառական դառել եմ ,
Քեզ Թանկագին առել եմ ,
Սիրունս ո՞նց էժան ծախեմ ։

328 Իմ եարն ինձ եար պըտի ,
Ջեռումը ֆանար 12) պըտի ,
Իմ եարի կպնած տեղը
Մէկ չինարի ծառ պըտի ։

1) Դեղ · — 2) Բերան · — 3) Առաստաղ · — 4) Բաժակ · — 5) Կօշիկ · — 6) Դատաստան · — 7) Նաւ · — 8) Կարօտ · — 9) Ծիպտո · — 10) Որբ · — 11) Սուաղած · — Լապաեր ։

digitised by A.R.A.R.@

329 Ես մի պուճուր տուն ունեմ,
Մէջը ոսկի սուն ունեմ,
Շան տղա՛յ, շատ մի՛ խօսա,
Քե պէս օխտը շուն ունեմ։

330 Ա՛յ տղայ էդ ես մէա ես,
Խանչալը մէջքըդ նետես,
Դու գիտես տղամարդ ես,
Ծըմակի փթուկ փետ ես։

331 Քանի ղուրպաթ 1) եմ ընկեր,
Միջացս գօտին չեմ քակեր,
Խարօնո՛ւկ անուշ, անթառամ,
Քեզնից զատ կինն է հարամ։

332 Խօրիմ 2) իմ դուշմնի գլուխը,
Զը կտրեր մըր տան մուխը,
Դիլաք 3) կէնիմ Աստըծուց
Օր կտրի ուր օղջի ծուխը։

333 Բարեկենդանը մօտ ա,
Իմ սիրտը շատ դարդոտ ա,
Աստուած մեր բան յաջող ա,
Եարըս ընձի կարօտ ա։

334 Ախչի՛, դու սիրուն բան ես,
Ընձի ձեր տունը տանես,
Գիշերը մօտըդ պահես
Առաւօտը դուրս անես։

335 Հէրանցս դուռը դուզ է,
Հէրըս բաշլըղ շատ կուզէ,
Հարուր մանէթին աչէ,
Գալտօնը 4) թեւդ քաշէ։

336 Գուլում գուլում գուլասար,
Բուրդ կը մանեմ հովասար,
Էս չէնումը 5) երկու հարս կայ
Մինը քանց մինը եաս ա։

337 Երկնքի կանաչ կարմիր,
Ա՛յ սիրուն կանաչ կարմիր,
Լերդս ու թոքս չորացաւ,
Սար ու ձոր կանաչ կարմիր։

338 Տեսայ ճամբին Գէորգ ղուշ,
Ուզեմ տեսնեմ ի՛մ անուշ,
Ելայ, որ ես քեզ մօտ գամ
Ոտս ծակեց մի մեծ փուշ։

339 Զօլում քրդեր մէկ էղած,
Զորս կողերս են բոլորած,
Զօրքու թենով 6) մըր տուար
Թալնեցին էղած չ՚եղած։

340 Ա՛խ, չաշխուն իմ ի՞նչ էրի,
Ղարիպ ընկայ, սիրտս կերի,
Տղայ, սուս կաց, ի՞նչ պէտք երգ
Կիգա՛մ, կիգա՛մ իմ տղերք։

341 Ղամիշ եմ ղալխայ միջին,
Աբըրշում ղալխայ 7) միջին,
Ես մի պուճուր եար ունեմ
Ուսումաթ 8) խալխայ միջին։

342 Արո՛ւ 9) ջան ես քե մեռնեմ,
Թո՛ղ տուր, որ նրան սիրեմ,
Սիրել եմ դուզ մէկ տարի,
Կ՚ուզիմ, որ նրան պագնեմ։

343 Լուսինն էլաւ կամարից,
Բանէ՛ք եարիս քամարից,
Լեզուովս արիւն առնեմ
Էն բուխախի դամարից 10)։

344 Համբարձում ա երգ կ՚առեն,
Ջան-գիւլում ա երգ կ՚առեն,
Մի խօսք էլ ինձի տուէք
Էրած սիրտս ուրախ արէք։

345 Խօսքդ տալը էլ ի՞նչ էր,
Սիրտըս այրելն էլ ի՞նչ էր,
Զուխտ տարի ինձ տանջեցիր
Էլ բաց թողալդ ի՞նչ էր։

346 Արագի խոր տէքը,
Կողբայ տօլադ 11) գետդէքը
Նստել են այգիները
Կանչում են լաւ ղայդէքը 12)։

1) Պանդուխտ. — 2) Թաղեմ. — 3) Աղաչանք. — 4) Վերարկու. — 5) Գիւղ. — 6) Ուժով. — 7) Մեքենայ. — 8) Ուսեալ. — 9) Հայր. — 10) Ջիղ, երակ. — 11) Դատարկաշրջիկ երիտասարդներ. — 12) Եղանակ, երգ։

digitised by A.R.A.R.@

**347** Էն հարը հո՞ր ա, տանը չի,
Վարած արտը կնանչի,
Էն հարը մին քիւր ունի
Կընկնի սարերը կը կանչի։

**348** Էս գիշեր լուսը տեսայ,
Իմ հարըս պուսը տեսայ,
Էլեր էր մերին կ'երթար
Կայինն ումուզը 1) տեսայ։

**349** Ժամի դուռը մաս մաս քար,
Ես չեմ առնի զարիպ հար,
Թեւերիս բերան օյայ
Եարըս Թալաղի բօյ ա։

**350** Թըռի՛, Թըռի՛, եղ-ընիկ,
Աւազանի ծիծըռնիկ,
Խաչ պատուհան կուտկեր է
Աւազանի ջուր խըմէ,

**351** Երկնից կամար օնքերըդ,
Ինձէն մի կտրէ սէրըդ,
Համ տուտին եմ համ լաչին 2),
Ես կարօտ եմ քո պաչին։

**352** Ծառին տակը հէլ ունիմ,
Հում ապրէշում Թել ունիմ,
Ծօ՛ մանչ, տավարը վար բէ՝
Ես քու վըրադ սէր ունիմ։

**353** Ալագեազ ձիւն ա բռնել,
Եարըս վատ գիւն ա բռնել,
Էլայ դուզը, որ նայեմ
Աստօծն է էն ղըմիշել 3)։

**354** Մարալ մարալ ման արի,
Ջէյրան ջէյրան տո՛ւն արի,
Թէ հար ես առել ընձի
Էլ մի՛ մընա, տո՛ւն արի։

**355** Էլեր ես փատ կը տաշես,
Ալամ աշխարքին կաշես,
Ինձի սէր էրիր չ'տար,
Ալ ալխալուղդ չը մաշես։

**356** Կայներ ես վանքայ հովին,
Բամին տայ դօշիդ մօվին 4),
Էրնէկ քո ծոց քնողին՝
Մէ ջուխտ չամամ բռնողին։

**357** Աղլուխըս լուա՛, զարկի,
Ախչի՛, դու ծաղկին պարկի.
Հերիք հոգեհան անես
Կամ ինձ սիրի կա՛մ Թարկի։

**358** Ստանպօլ բոլոր մերի,
Բոլորը կըլլի դերի,
Ես իմ հարը կը ճանչեմ
Օսկի մազերը կ'երերի։

**359** Կանգնել ես միր տան քամակ 5),
Խօսքըդ դարձրել ես զանակ,
Ախչի՛, եդ կա՛ց, բանըդ տե՛ս,
Որ չը քցեմ քեզ իմ տակ։

**360** Ծարփի գլխին ունիմ տուն,
Մէջ անկել եմ էրկու սուն,
Դարդս էնքան չա՛տ որ
Գիշերները չ'ունիմ քուն։

**361** Ինչի մանչուն 6) ֆասը ալ է
Դանայ, դանայ ինձ կաչէ,
Ինձէն քեղի փայդայ 7) չ'կայ,
Գնա՛, գնա, ճամբադ աչէ։

**362** Էս բակը բակ գլմանիր,
Գլխունը Թագ գլմանիր,
Իմ հարը դռնէն անցաւ
Իրմօվը բեակ 8) գլմանիր։

**363** Վարդ ա քաղել իմ հարը,
Տեսել ա իմ մեծ մարը,
Խօսքը խօսքի ա քցել
Խօսքը չի առել անճարը։

**364** Օրերս դառել ա խաւար,
Ծնուել եմ հարիս համար,
Մեռնի իմ հարիս մէրը
'Նայ ա տուել չար խաբար։

---

1) Ուսին. — 2) Կանացի բարակ գլխակապ. — 3) Խնայել. — 4) Դիպակ. — 5) Ետեւ. — 6) Երեխայ. — 7) Օգուտ. — 8) Բեկ.

digitised by A.R.A.R.@

365 Ղարաֆիլը գեղին է,
Իմ ուզածը գեղէն է,
Կ'ուզէք հարցրէք իմացէք
Մեր դրկցանց 1) աղէն է։

366 Ինձ զատեցին մեր տանից,
Ազգական-բարեկամից,
Նոր աշխարք են ինձ տանում
Հեռու եմ էլից-գիւնից։

367 Լորը թռաւ էս հանդից,
Կտրաւ շաքարը ղանդից,
Աշըղ չի, աշըղ դարձայ
Գընացած եարի դարդից։

368 Լուսնեակը բոլորել է
Ամպի մէջ գլորել է,
Ախչի՛, քու ծոցիդ մէջը
Ծծերդ կլորել է։

369 Ջաղացիս ջուրը տարթ ա,
Կտուրը լիքը մարդ ա,
Հըրէս էկաւ իմ եարը
Գոտիկը լիքը վարդ ա։

370 Սեւ ամպերը սազում չէ,
Սիպտակ եայլուղ 2) սազում չէ,
Եօթը տարի ալ հագնեմ
Սիրտըս սեւ է սազում չէ։

371 Ախչի՛, ախչի՛ ի՛նչ ըլլիս
Կատուններին պոչ ըլլիս,
Ազամանի թաս ըլլիս,
Բաչքայ հօրըս հարս ըլլիս։

372 Սիր ած աղջըկայ տէրը,
Խօսքըն ալ տուել հէրը,
Օխտը տարի սիրեցի,
Չը տուեց քեաֆուր մէրը։

373 Բշերն անքուն գիր կը գրեմ,
Արտասուքս գետ կը շինեմ,
Արաղ, ծէգը ջրիդ չ'առած
Իմ սեւ դարդ քեզ կը բերեմ։

374 Երեւան սաւ եարըս,
Բաղդադ խուրմաի եարըս,
Շաքի, Շիրուան, Շամախի,
Թաւրիզ աղասի եարըս։

375 Լուսնեակ էրգան գիշեր,
Գեր օնքլի կարմիր թշեր,
Ախչի՛ ախբօրդ արեւը սիրես
Դաստուր 3) տուր գամ աս գիշեր։

376 Էրեւանու բերին նուռ,
Բերին թափին ժամին դուռ,
Ժամի դռնէն դուս կուգայ,
Շանդանի 4) պէս լուս կուտայ։

377 Ամպերն ընկան Մասիսին,
Կարօտ մնացի իմ եարին
Աստծ սիրես էրուածիս
Ջուղաբ բեր էկող տարին։

378 Ճաղացի ջուրը չիման,
Ախպօրը չըկայ իման,
Փրաջը կաշին տարան,
Մէ պէրան չ'առաւ «եամա՞ն»։

379 Աղջի՛ աղջի համ օնես,
Ճըրիկ-ճըրիկ ծամ օնես,
Քո մօր աչքերը վեր գառնայ,
Թէ ինձ կեալի կամ օնես։

380 Ա՛յ աղայ արի՛, գընա՛,
Շապիկդ առ՛ւր ու գընա՛,
Լուամ լուամ չ'խաըկուի
Վարդաջըրեմ խաըկուի։

381 Ես աս գեղին ցօրնէն եմ,
Խաս բաղու խնձորէն եմ,
Խնձոր էզէ՛ հասեր եմ,
Բիւլբիւլի պէս խօսեր եմ։

382 Իմ հարսըս հէնց էս տանն է,
Ընտեղ նստած կար կ'անէ,
Բաղդադու սեւ չալիցը
Ընձի չուխայ կը կարէ։

1) Դրկից, հարեւան։ — 2) Թաշկինակ։ — 3) ա. Իրաւունք բ. արձակուրդ։ — 4) Աշտանակ։

digitised by A.R.A.R.@

383 Խնամի խօշ 1) ես էկել,
Դարդակ ու բոշ ես էկել,
Երկու բուլուճ 2) ես բերել.
Էն էլ ճամբան ես կերել ։

384 Սիրուն ես ծաղկի նման,
Կապուտ ես լեղկի նման,
Բիրդան 3) թուար ձեռիցս
Թեւաւոր հաւքի 4) նման ։

385 Ճամբայ տուէք առաջ գամ,
Սիրած եարիս բարեւ տամ,
Ուխտ եմ արել, որ առնեմ,
Թո՛ղ տեսնի աշխարհ ալամ ։

386 Մեր տան տակը վար կ'անեմ,
Զալ քչեղակին 5) քար կ'անեմ,
Վեր իմ սիրածին ինձ տան,
Գելութիւնըս 6) թարգ կ'անեմ ։

387 Բաղչի վէչը միկխտան,
Քօխվի ախչիկն ինձի տան,
Իմ անունը Զարնչան,
Մատնեքըս տամ քեզ նշան ։

388 Երկընուց մատնի մ'իջաւ,
Մատիս վրայ խաչուեցաւ,
Ես իմ եարը փիամ գիտէի,
Ճէվահիր 7) քար բացուեցաւ ։

389 Աչքերդ բըլոր բըլոր,
Ման կը գաս իմ չորս բոլոր,
Բըլոր աչքերիդ մեռնիմ
Մի աչի խոլոր մոլոր ։

390 Կասես չողք քարին ընկաւ,
Կրակն սրտիս մէջ ընկաւ,
Կամար ունքից թուխ աչքից
Ցաւն ջիւան 8) ջանիս ընկաւ ։

391 Արի մի փաթ պար խաղանք,
Տընկոզ 9) մնանք չը կաղանք,
Հարսանիքիդ ալուրը
Մուղնու ըխտից վաղ աղանք ։

392 Լամպի չիչան կը ճնկայ,
Կլորայ ծոցդ ընկայ,
Սիպեխը զոխ է գառել,
Իմ եարը դոխ է գառել ։

393 Շուն ա հաչում քուչումը,
Եարիս տը բուճումը,
Շուն չան որդու վատ խօսքը
Ինձ թողել ա քուչումը ։

394 Ազուէս դարը պլել ա,
Եարս տակը քընել ա
Ջէն տուի ձէնս չ'առաւ
Էդ ի՛նչ անուշ քընել ա ։

395 Խաղ կ'ասեմ խաղիս գլխին,
Իմ հէրանից բաղի գլխին,
Քաչալն 10) իրան դեղ կ'անի,
Հողը տամ կաղի գլխին ։

396 Էս օր գութանը մերն ա,
Մաճ բռնողը իմ հէրն ա,
Եզնարած չէկ չէկ տղէն
Ալամ գիտէ ի՛մ տէրն ա ։

397 Դամբուրիս կոթը քերեմ,
Կայնի քեզ գինի բերեմ,
Ձեռքըս ճտովըդ տանեմ,
Գնացած խելքըդ բերեմ ։

398 Կնձիկ-մնձիկ մի հեղճ եար,
Կէծ ա ընկել 11) իմ հեղճ եար,
Գնացի, որ հետը խօսեմ,
Տեսայ քընել ա իմ եար ։

---

1) Բարով. — 1) Խմորեղէն. բուլքի. — 3) Յանկարծ. — 4) Թըռչուն. — 5) Կաչաղակ. — 6) Գժութիւն. — 7) Թանկագին ակն. — 8) Երիտասարդ. — 9) Մէջքը ծռած. — 10) Ճաղատ. — 11) Հարբել է։

digitised by A.R.A.R.@

399 Եարս նստել ա գօշակին,
Ունքը ու միտքը փէշակին 1),
Խըմել ա նստան գինին,
Հառ կանի մանուշակին·

400 Սարերին թերթիփ ձիւնը,
Բաղերին ավլան հունը,
Իմ եարըս մին խօսք ասեց
Կտարեց սրտիս սիւնը։

401 Խօշավանքի թվանքը,
Կըլմանի կարմիր վանքը,
Կարմիր վանքի դշերը,
Սիրուն եարիս թշերը։

402 Դամբուլի 2) կոթը փթի,
Օխտը կով ունեմ կթի,
Ո՛վ որ իմ սիրածն առնի
Հոգին դժոխքին փթի։

403 Ես Կարծախու փոսէն եմ,
Գդաշ սարի փաէն եմ,
Մուժտայ 3) տարէք քու մօրը
Ես քու նանու փեսէն եմ։

404 Սանդ կը թակեմ հա՛խ ա,
Զմօշկը վառնիս յախ ա 4),
Ա՛յ տղայ շատ մի՛ խօսա,
Զայ 5) մուկը ոէխադ կախ ա։

405 Տանս տակից ջուր բղխար,
Եարըս սիրտըս լուանար,
Եարիս տուած եարէքը 6)
Իրան ձեռքով լուանար։

406 Գիւլն եմ փըռել ես ղաշին 6),
Ի՞նչ եմ անում անտաշին,
Ես սիրել եմ ես կ'առնեմ
Լէն երես ղալամ ղաշին։

407 Սրտիս դարդերը խոր ա,
Տունը մերը չի՛, նոր ա,
Բէֆասըզ մարդի ձեռից
Հուրն յաւիտեան ես կորայ։

408 Գեղէն էլլես գեղ մանիս,
Իմ քըցած տեղը մանիս.
Ինձէն ղայրի 8) եար բռնես,
Բէմուրատ 9) հողը մանիս։

409 Մեր չարտաղը բանցա է,
Սիրած եարը քաղցր է,
Պելէք 10) հօրը հարցնենք,
Թէ չը տուեց փախցնենք։

410 Գնացի հանդը կըրակի,
Ոտքըս դիպաւ փըռանգի.
Շան գեադին արի՛ թաղի,
Ղըրկեցի լափըստրակի։

411 Ես ի՞նչ կանեմ ամակը,
Ըստացել եմ նամակը,
Բաղդիցըս գանգատ կանեմ
Խաւար է արեգակը։

412 Աշխարքի մալ ինչ կ'անեմ,
Արի՛ քեզ սարը հանեմ,
Թէ թեւերըս բեզարեց 11)
Գըլխիս վըրայ կը տանեմ։

413 Իմ սիրտըս տաղ մի՛ անի,
Ջիգեարիս աղ մի՛ անի,
Ջեր դըանը, ա՛յ աղջիկ,
Ինձի տուտաղ 12) մի՛ անի։

414 Կիրակի էլ պաս կըլլի՞,
Արձթէ էլ թաս կըլլի՞
Վարդապե՛տ, օրթիդ մեռնի՛
Սիրածն էլ չ'հաս կըլլի՞։

---

1) Արհեստ. — 2) Սալորենի. — 3) Խաբար. — 4) Մեծ է. — 5) Սպիտակ. — 6) Վէրքերը. — 7) Թամբի բարձր մասը. — 8) Բացի. 9) Անմուրազ. — 10) Եկէք գնա՛նք. — 11) Ցոգնեց. — 12) Բանտարկեալ.

digitised by A.R.A.R.@

415 Գլօխս թութուն չէմ կըտամ,
Թութուն չէվիրը ես կըտամ,
Հով վէր սէրը սիրածան հանի
Սրտին քարփաթուն 1) եր կը տամ։

416 Օչխարն էրեր իմ գօշը,
Պիճիկի 2) լեզուն խօշ է,
Ես մեռնիմ պզտի եարին,
Ամանաթ 3) եարը բօշ է։

417 Դէմէն ձիաւոր գընաց,
Նալը 4) պլպլաց գընաց,
Ամենքին բարեւ տուեց,
Ինծի վառեց ու գընաց

418 Գութանը վարի փօսին,
Շողն է զարկե ակօսին,
Կարմիր խնձոր դօշ էնեմ,
Ղըրկեմ իմ նանի փէշին։

419 Փափախդ ծուռ ես դըրել,
Գօտիկդ նուռ ես դըրել,
Ծոցումըդ դեղին ոսկի
Դու էրկու բուռ ես դըրել։

420 Իմ աղբէր ծառի տակին,
Սաղմօսը կռան տակին,
Սաղմօսը դիր ա առել,
Լեզուն բլբուլ ա դառել։

421 Արեւն առաւ գերանին
Ես մեռնիմ Աւետարանին.
Ջուխտ աղաւնիկ դուրս ելան
Կանաչ խոտը բերանին։

422 Ախչի՛ անունդ Էլիսայ,
Գլխիդ կարգինկէն 5) խասս ա,
Թուշդ դէս արա՛ պաչեմ,
Գընա՛ քո նանին ասա՛։

423 Կաղնալ ես կօրիս միջին,
Քաքուլըդ թափնիս միջին,
Թէ ինձ օղես հա վազես
Գիւլլան տայ սրտիդ միջին։

424 Էս սարէն մէկ քօչ 6) անցաւ,
Քօչը տուաւ մէջ անցաւ,
Սիրտըս մէկ կրակ ընկաւ,
Ո՛չ վառաւ ու ո՛չ հանգաւ։

425 Սարերը նունուշ գըլլի,
Վարդին մէջը փուշ գըլլի,
Գըլուխըս եարիս ծնկին
Քունըս չատ անուշ գըլլի։

426 Ոսկի խանջալիդ մեռնիմ,
Արծաթ ու բուզ 7) վրէդ քաշեմ
Հետու կանգնած առջեւիդ
Ջուր ե՞րբ, ասա՛, յեդ աշեմ 8)։

427 Գութանը վարած տեսայ,
Հերկերը վարած տեսայ,
Ապուադ գետինը մտնի,
Սիրածդ տարած տեսայ։

428 Ինձի տար քու հէրանց բաղ,
Ջեր վարդերին դրել չաղ,
Հէրդ ընձի ուզէ քեզի՛
Աստըծուն կ'անեմ մատաղ։

429 Ախչի՛ անունդ Մայի.
Ճակատըդ բոլոր չահի 9),
Թուշդ դէս արա՛ պաչեմ
Աստուած ախպէրդ պահի՛։

430 Խախալը 10) ման եմ ածել,
Բոյիդ նման եմ ածել,
Դու գիտես եար եմ առել
Եարե՛լ ու ման եմ ածել։

431 Ա՛յ տղայ, ավարած 11) տղայ,
Կռճակնին չարած տղայ,
Իմ հէր քեզ աղջիկ չի՛ տալ
Սիրտը խչարած 12) տղայ։

432 Բնացել ես օրաւ ե՛կ,
Նազլըխըդ խիարով ե՛կ,
Մեր տնունը 13) զալմաղալ ա,
Շօռ տօ՛ 14), աղբըրաւ ե՛կ։

1) Մեխ հանելու գործիք. — 2) Փոքր. — 3) Պահ տուած իր. — 4) Սմբակ. 5) Գլխարկ. — 6) Խումբ, քարաւան. — 7) Ոսկեթել. — 8) Նայեմ. — 9) Փող (ոսկէ). — 10) Զամբիւղ, սապատ. — 11) Խաշնարած. — 12) Եռեկած. — 13) Դուռն. — 14) Շուռ տո՛ւր։

digitised by A.R.A.R.@

433 Մուղնուայ ջուրըն տարն է,
Մուղնի էրթողն իմ եարն է,
Թող էրթայ մուրազն առնէ,
Ես դառնայ սիրածն առնէ։

434 Ղշե՛ր թեւերըդ բացէ՛ք,
Ազիզիս քեօլկա արէ՛ք,
Բարակ քամին որ փչի
Դուք հետը նանիկ արէ՛ք։

435 Աղջիկն էկեր պար կ'ուզէ,
Մարդըրտները չար կ'ուզէ,
Հըլը 1) պապըմ չը տուած
Ինծէն անգին քար կ'ուզէ։

436 Սարի տակը մշուշ ա,
Իմ եարը բանկլի 2) զուշ ա,
Էդ ո՞վ ա տսում գէշ ա,
Մեղրից ու շաքրից անուշ ա։

437 Աղջիկ աղջիկ համ օնիս,
Զորս աւանի ժամ օնիս,
Քո հէր քո մէր շատ ապրի
Ինձ գալի ղու կամ օնիս։

438 Ձեր բաղից խնձոր քաղեմ,
Հօրըդ գլուխը թաղեմ,
Քեզ մանհան չեմ անիլ
Աշխարքում քանի սաղ եմ։

439 Էլայ գումբէթի 3) վըրէն,
Նայեցի ներքի վըրէն,
Տանըերիկըտնոց, չորսնոց,
Է՛ն էլ գոլվաթի 4) վըրէն։

440 Սօմ սըրմալի ալ փուշի,
Ախչի՛ սիրտըս կը մաշի,
Քու տուած անուշ պագիկը
Չեմ տայ հազար ղուրուշի 5)։

441 Ախչի՛, ի՞նչ էր պիլակըդ,
Ոխով կոչկով պիլէակըդ,
Մի՛ բանա ճեմակ դէօկսըդ
Ինծի կէփէ կըրակըդ։

442 Ախչի՛, ախչի՛ դէտ քընայ,
Առաջքաւդ եա քընայ,
Խուռահատին քամին փչի,
Գիւլգազ չալըտ եա քընայ։

443 Սարը կոխել ա դուման,
Գդակդ ամի մի՛ թուման,
Սէրըդ սրտիս մէջն ընկաւ
Աստուած վկայ ունգուման 6)։

444 Արեւը բոլորել ա,
Լուսնեակն ելել նորել ա,
Սիրունի խաթեր համար
Քունն աչքիցս կորել ա։

445 Զարտախին 7) թան եմ ածայ,
Բոյաւըդ մըն եմ ածալ,
Խափալ եմ թէ քե եմ գալու
Եաղլախըդ փոլ եմ ածալ։

446 Վարթաւորը գալիս ա,
Ծաղիկըս հնձելիս ա,
Վարդեւորի ջուր աղջի՛կ
Սառդ 8) ծըլվըլալիս ա։

447 Ձեր տունը է՛ն քուչէն ա,
Իմ աղբէրն է՛ն գեչեն ա,
Ա՛յ տղայ, լա՛ւ գիտենա,
Սիրտս պտտիդ միջին ա։

448 Ազգօրս անուշն Աղասի,
Քիսէն լիքը արասի,
Քիսէն խարջըղ 9) չը մընաց
Քօմմա 10) օղուրիս 11) գընաց։

---

1) Դեռ. — 2) Գիտակաւոր. 3) Գմբէթ. — 4) Հարստութիւն. —
5) Տաճկական մանր դրամ. — 6) Անապատելի կերպով. — 7) Սրահ. —
8) Ձայն. — 9) Մխանլիք, ծախս. — 10) Բոլոր. — 11) Բարեհոգի։

digitised by A.R.A.R.@

449 Բիւլբիւլը տալին 1) վրայ,
Խնձորը ծառին վրայ,
Սիրած սիրածին տային
Ջոր գետնին քարին վրայ։

450 Կեանքիդ արեւիդ մատաղ,
Կանանչ տերեւիդ մատաղ,
Նամակով յիշել էիր,
Գրկած բարեւիդ մատաղ։

451 Սոր նորը նորեր է,
Իմ եարի եղը կորեր է,
Վօվ որ գտնի, թո՛ղ ետ տայ
Ծախս օսկին մուժդան 2) է։

452 Թոռ կը գայ արեւ կ'անի,
Նիշանդած տերեւ կ'անի,
Քուրն ախպօրը մատաղ,
Ծըղաթաթաղ վար կ'անի։

453 Գուշը ձեր կտրին թառեց,
Սէրըս արտումըդ սառեց,
Խեղճ քեարամին Ասլիի
Բորբոք կրակը վառեց։

454 Էջմիածին կալ ունիմ,
Բլբուլի պէս եար ունիմ,
Շան թուլայ սխրդ գո՛ց 3),
Քեզ պէս ես հազար ունեմ։

455 Էս տներ պուճուր տներ,
Միջին կար օսկէ սներ,
Սրտով սիրած եար պիտէր,
Սուն ու գերան պար պտէր։

456 Գրնացի ջուրը ջըրի,
Օտքըս ընկաւ օձի լեղի,
Ի՞նչ ըսեմ հօրս ու մօրս,
Ինձ տուին ղարիպ տղի,

457 Հաց կը թխեմ եուխայ ա,
Եարիս կէցը չուխայ ա,
Իմ եարն ինձ հունց կը թակի
Ինքը մին մենձ խոխայ ա։

458 Էս սարը բարձըր սար է,
Տակը ղանջըղոլու 4) քար է,
Ասածըս մէկուճար է
Հագածն էլ բոխչըխար 5) է։

459 Սարին տակը մընացի,
Բըկխս կապը վլացի,
Խաբար էրէք իմ եարիս
Ես հոս ղարիպ մընացի։

460 Սարին էն ղոլը ձիւն է,
Էս ղոլս հաւքի 6) բուն է,
Հըրէս եկ'ն իմ եարը
Ծեղակը թաւթաւ հիւն է։

461 Նաւըս ծովին մընաց,
Իմ օր ու կեանքըս գընաց,
Մեռնելն ինձ համար ոչինչ
Սիրուհիս արտում մընաց։

462 Կայնայ քեզի խրատի,
Ախչի՛, գրնա՛ կըրակի,
Կայնի բոյդ սէյր էնեմ
Ուրբաթ, շաբաթ, կիրակի։

463 Կարօլը քօչ ա գընում,
Քօչը քօչումն ա գընում,
Էրնէկ տուէք էն քուրը
Օխան աղբօր մէջ ա գընում։

464 Ախչի՛ մօրէդ ուչ էլար,
Մեծցար կարմիր թուշ էղար,
Տունմ՚ չունիմ օր տուն էրթանք
Քեզ տանեմ ո՞ւր էրթանք։

465 Ալագեազի դօշերում
Հազար ծաղիկ են բուսնում
Ընչի՞ այդպէս դու մընաս,
Արի՛, քեզի տամ ուսում։

466 Գընացի չայը վլասք,
Սապոնն էր ոսկեջըրած,
Ի՞նչ՚ անի հէրն ու մէրը,
Ճակատիս էս էր գըրած։

1) Ճիւղ. — 2) Նուէր, ընծայ. — 3) Փակի՛ր. — 4) Ծղթայակապ. — 5) Գործածուած կտոր. — 6) Թռչուն։

digitised by A.R.A.R.@

467 Ջուր կուգար ափին-ափին ,
Հա՛մ տխրացու հա՛մ զարքին ,
Ջուր չէր ջրէ ծառները
Գիր չէր գրէ մատները ։

468 Թամբը թամքին վրայ ,
Իւղունիկը վանքին վրայ ,
Իմ ախպոր ըշտե՞ 1) տեսար .
Թագաւորին թախտի 2) վրայ ։

469 Ծատատակին ջուխտըմ ղոչ ,
Մինը փնջած՝ մինը ոչ ,
Աստուած զարգեահիդ 3) մեռնեմ
Մընին կըտա՛ս՝ մընին ո՛չ ։

470 Բաղից մէջ կայ էրկու ծառ ,
Տղա՛յ , արի՛ ընձի տար ,
Սարըծուն մատաղ կ՚անեմ
Էրկու չիչակ , էրկու զառ ։

471 Առեւն տատ գերանին ,
Հաւքը թառեց երանին ,
Շան աղայ չատ մի՛ խօսա
Գիղծ ես տանիլ բերանին ։

472 Կարմիր վարդը զամով է ,
Սիրած եարը համով է ,
Ատ տեղ զօռի բան չըկայ ,
Սէրն ու աշուղան կամով է ։

473 Ա՛յ հաւանեմ հաւանեմ ,
Մեծ կարպետի խաւան 4) եմ ,
Էլ գիտայ . այամ գիտայ .
Ես էն եարին հաւան չեմ ։

474 Նոր անկած բաղի բար ես ,
Ինձի թազա նուբար ես ,
Անուշիկ մեռնիմ , ջիւա՛ն ,
Աշխարքին բարեբար 5) ես ։

475 Էրկանքըս աղի վըրէն ,
Շամամը թաղի վըրէն ,
Ես մէկ թեւաւոր ղուշ եմ ,
Իմ հէրանց բաղի վըրէն ։

476 Հովտը սարին նման ա ,
Տեսանք իմ եարը տանն ա ,
Իմ եարն մին քեանքիւլ ունի ,
Օսկի թելին նման ա ։

477 Կեանքիս խաղաղ օրերը ,
Ընկել են խոր հորերը ,
Սիրտըս հոգիս վըրդովուած
Ման եմ գալիս չոլերը ։

478 Իմ եարը էլաւ գընաց ,
Դարին դէմ տաաւ մընաց ,
Հալալ թողու թիւն չէրի ,
Սրտիս տաղ էղաւ մընաց ։

479 Ալ ձի հեծնեմ կը քեզի ,
Եօրղայ քշեմ կը քեզի
Գընը եարէս խաբար բեր ,
Ջար պաղ չուլ կէնեմ քեզի ։

480 Սոլած՝ քուչէն մա՛ն արի ,
Ես քե մարդ չեմ համարի ,
Գընա՛ հօրըդ պարտքը տա՛ւր ,
Նոր արի՛ աղջիկ սիրի՛ ։

481 Մըթնալ ա մթնաճանանչ ,
Ձեւ ինջի քոլը կանանչ ,
Հըրէս եկաւ իմ եարը
Բեղերը արնակալած ։

482 Ես մի կանաչ խիար եմ ,
Բու ջանին իսթիար եմ ,
Էրթաս էրթաս յետ կայնես ,
Իմանաս՝ բէյլու եար եմ ։

483 Ղուշը կչտովս անց կացաւ ,
Թռաւ գընաց անց կացաւ ,
Էրկուսիս մէջ աեղովը
Ո՞ր սրտամեռն անց կացաւ ։

484 Ախչի՛ անուշիկ Խանի
Լեչակդ քամին տանի ,
Ես ախ մի պաղում պտենք
Իմ հէր քիւ հէրը խնամի ։

---

1) Ո՞ր տեղ . — 2) Գահ . — 3) Դատաստան . — 4) Կարպետի երե-սի բուրդը . — 5) Հաւասար ։

digitised by A.R.A.R.@

**485** Ծոխս 1) հըլունը 2) հաղեղ է,
Ջանս ջանիդ լայեղ 3) է,
Էլար գուար աչեցիր,
Ջիւան ումրըդ 4) մաչեցիր։

**486** Բօյիդ սալվի չինարի,
Կանչում եմ մօտըս արի,
Աշխարհիս մալ ու մուլքը
Անջախ 5) քո հետ գին արի։

**487** Կաքաւը կայներ է քարին,
Կտուցը լէքը նարին,
Մէ եայլուխ վարդ եմ քաղե՝
Տարէք իմ անուշ եարին։

**488** Ծըղացիս տիւոնը տաշած,
Նաղլըխիս քօլը քաշած,
Կեռ կեռ ունքերից մատաղ
Ղաշից 6) ղլամաւ քաշած։

**489** Մառաւ եմ հէչ ջուր չըկայ,
Գետերուն կամուրջ չըկայ,
Վախենամ ղարիպ մեռնիմ,
Քովս հար ու մար չըկայ։

**490** Էրթիկ էրթիկ բռնել ես,
Էրթկայ տակին կոնել ես,
Ջէ՛ն տու ի, ձէնս չ՚առա՛ր,
Մազեամ 7) ընձէն ջորե՞լ ես 8)։

**491** Ծառնե՛ր՝ դուք ծիրան մի՛ք տայ,
Ծըղնե՛ր՝ դուք էլ բար մի՛ք տայ,
Ես ղարիպ եմ՝ ղոնախ 9) եմ
Դարդերըս իրար մի՛ք տայ։

**492** Ա՜յ տղայ դու աղայիր,
Ջի՛ գիտում բանդզաղայիր 10)։
Ուտել մի՛, պատռել մի՛,
Դու մի ժուլիկ 11) գեաղայ իր։

**493** Հոռի 12) ծառին բար չըլի,
Առանց քօլկայ եար չըլի,
Ա՜ հէր, ա՛ մէր խօսալ մի՛ք,
Խառնուած օրտին ճար չըլի։

**494** Նարս գրկել եմ թըթի,
Ախչի՛, քու վիզը փըթի,
Ո՛ր տեղ խաղալու գընաս
Ման արի՛ եարըդ գտի։

**495** Ախչի՛ մազերդ հիւլէիր,
Թուշդ էրէսիս քսէիր,
Էլլէիր վարդի ծառին
Բիւլբիւլի պէս խօսէիր։

**496** Նար կանչեմ արի՛, արի՛,
Բաղումը տեսայ արի՛,
Եա՛ր, արի՛ մախ պարը,
Ես էլ առեմ իմ խաղը։

**497** Իրիկունս մթին ա,
Տաւարը չոր թրքին ա,
Հըրէս էկաւ էն եարը
Ջեռքը պիւլիւր մըրքին ա։

**498** Կայներ եմ գալ չե՛մ կրնայ,
Լցուել եմ լալ չե՛մ կրնայ,
Ինչըդ որ գնացել ես՝
Անունդ տալ չե՛մ կրնայ։

**499** Էս բակը բակ լմանի,
Գլխունը թագ լմանի,
Ջան տղին անցաւ գընաց
Իրմովը բակ լմանի՛։

**500** Բոստանը 13) համեմ ցանի,
Դարդըս քամին թող տանի՛,
Արի՛ գնանք իմ եար ջան
Վարդեւորն անենք Անի։

**501** Անցայ Արազն էն վաթան 14),
Փռել եմ թոփըմ քեաթան,
Ո՛վ որ իմ սիրածն տանի
Կարեմ ազիզի 15) պատան։

**502** Դրան դէմին կայներ ես,
Արջկան ձեռքդ մաներ ես,
Քու դարտեր ընձի վառեց,
Ընձի անէն հաներ ես։

---

1) Պարանոց· — 2) Ուլունք· — 3) Արժանի· — 4) Կեանք· — 5) Հազիւ· — 6) Դիմամբ· — 7) Մի՞թէ· — 8) Հեռացել ես· — 9) Հիւր· — 10) Բեկի որդի· — 11) Սրիկայ· — 12) Ուռի· — 13) Բանջարանոց· — 14) Հայրենիք· — 15) Հարազատ։

digitised by A.R.A.R.@

**503** Մէ՛ կար ունիմ կար ա՛,
Եարս հէնց մինուճա՛ր ա,
Հողեմ աշխարքի գլուխը
Ծնուել ա ինձ համար ա։

**504** Մեր վարդ Վարդանի մահը,
Ղըզըլբաշի մեծ ահը,
Առած իմ ցոյց տուր ո՞ւր ա
Մեծաւր քու դարդեանը։

**505** Եարը իրիգուն կաչէ,
Որ ընձի իր քովը քաշէ,
Վա՛յ անիծուի քու հէրը,
Որ քեզ պէսն ինձ չը մաշէ։

**506** Նաշ են տանում մեր թաղը
Չի մընում խօսքիս սաղը,
Առում են եարդ մեռել ա
Իսկ ես կանչում եմ հաղը։

**507** Ծաղիկ ես քո ծառէն եմ
Թէքրի միջի թառէն եմ.
Տարին մէ հետ ես գալըմ,
Մակեամ քո մասխարէն 1) եմ։

**508** Կարմիր աղլուխը ձեռիդ,
Ալ բինիշը կոներիդ,
Ջինաւոր Սուրբ Սարգիսը
Բալքի հասնի հաւարիդ։

**509** Քարըս տաշի բոլրեցի,
Եարիս տեսայ՝ մոլրեցի.
Անտէր մընար է՛ն ուխտը,
Որ ես ընտեղ սիրեցի։

**510** Սիրտըս արնով լցրեցիր,
Կըրակով խորովեցիր,
Աչքըդ դո՛ւս գայ ա՛յ ափլոր,
Ինչ շուտ ձէնդ քցեցիր։

**511** Նազլու ջանան չորօրալով,
Դու էլել կ՚երթաս սէյրան,
Կաքաւի պէս սաքմիշ կ՚լնես 2)
Կը նմանիս եղնիկ ջէյրան։

**512** Իմ եարը գուռ կը գնէր,
Գոտիկը նուռ կը գնէր,
Ես կը մեռնեմ է՛ն եարին
Փափախը ծուռ կը գնէր։

**513** Մեր գետը վարարել ա,
Սիրտըս հետը տարել ա,
Ինձ պէս ջոմար ա 3) աղջիկը
Ծաղկի պէս սալարել ա 4)։

**514** Ա՛յ գիշեր տարի դառի՛,
Կերըս թող ըլնի գարի,
Մինակ եարըս ինձ համար
Արտով կայնի իրխարի 5)։

**515** Քաղցր լեզուդ պալի պալ է,
Թուխ աչքերդ զաչ ու լալ է,
Տեսնողն կ՚լնի բօյիդ հէյրան
Մէկ չինարի սալվի տալ է։

**516** Կաքաւ եմ քարա միջում,
Կը կարդամ ձորամիջում,
Աստուած իմ մուրազըս տուր
Էս գալող չարթու միջում։

**517** Արագի ափի զագը,
Առում եմ մուխամբազը,
Ինձի սիրի՛ աղջիկ ջան,
Ինձ այրեց քո էշխ-նազը։

**518** Եարըս գեղի խարազ ա,
Աղլուխս տուի թաւազա,
Մինն էլ որ իմ կուշտը գայ
Գաթա կ՚ուտեցնեմ թազայ։

**519** Գու թանը հօյա հօյա,
Գութան քաշողը տօլ 6) ա,
Տօլ ես տօլութիւնդ արա՛
Քո խօսքին նայող չկայ։

**520** Կողբայ բերիցին աղը,
Սրտիս քաշեցին դաղը,
Քեզ հետ էնքան չե՛մ խօսայ
Բարով ըլլենք եայլաղը։

---

1) Ծաղրի առարկայ. — 2) Ետ քաշուել. — 3) Գեղեցիկ. — 4) Նիհարել, թառամել. — 5) Խոստովանութիւն. — 6) Դատարկաշրջիկ.

digitised by A.R.A.R.@

521 Քեահլան ձին գոմում կապած,
Սիրտըդ սրտիս է կպած,
Տանու դուշման մարդիկը
Ինձ ու քեզ լաւ են խաբած.

522 Մազերըդ ոլորել ա.
Աչքերըդ բոլորել ա.
Երեք օր է չեմ տեսել
Իմ սիրտս մոլորել ա։

523 Հաց եմ թխել պարի ա.
Իմ եարը սափարի 1) ա,
Եար ջա՛ն սափարից դուրբան
Խօսքերըդ շաքարի ա։

524 Մի թռչուն սեւ թեւերով,
Երգեց պէս պէս ձեւերով.
Ասաւ խելօք մարդ քիչ կայ
Աշխարհ լի է խեւերով։

525 Տեղ եմ քցել փոթ կը տայ,
Բարձ եմ դրել սոթ կր տայ,
Մեռնիմ միջի քնողին
Անուշ խնկահոտ կըգայ։

526 Կարմիր վարդիս վար չ'ունեմ.
Չ'իմանաս թէ եար չ'ունեմ,
Գիտես թէ ես մենակ եմ
Մակեար սիրելի չ'ունեմ.

527 Երկինքէն անցաւ դուռնէն.
Բրդի չինած կուլէն,
Աղջի չատ մի՛ խօսի
Բերանը կծի թուլէն 2).

528 Սարէն կըգայ սառը ջուր,
Տղայ արի՛ տար քու քուր,
Քու քուրն ինձի հաւան չէ,
Տար ինձանից լաւին տուր։

529 Ուրի ծառը կանանչ է,
Զարդ ու բարիդ ճանաչէ,
Գող մարդկանցից հեռացի՛ր,
Որ խիղճըդ քեզ չը տանջէ.

530 Ա՛յ աղայ հազար 3) ըլնես,
Իմ աղբօր սադար 4) ըլնես,
Թէ ինձանից ջոկ եար բռնես
Դու սրտապատառ ըլնես։

531 Ցուշիկ քելայ վըր պաղին 5),
Զընկնի կոտրի սըչքաղին 6),
Սրչքաղու ձէնն անուշ ա.
Սարի թփիկ նմուշ ա։

532 Հէրըս գիրըմ գրեր է,
Բաղըմ ունիմ փըլեր է,
Մըր բաղի մենձ ալ ղուշը
Իմ դրկումը քներ է։

533 Գընա՛, գընա՛ քու հետ գամ.
Խըռ քու զուչի ձէնին գամ,
Փառջիկ յըլնամ ու քնամ
Պագիկն առնեմ ու ետ գամ։

534 Ժամի գըռան սեւ քարը,
Բա մօ՞նց կըլլի իմ ճարը,
Սիրտըս դարդով լցուեր ա
Ձեռէս թռաւ իմ եարը։

535 Կաքաւ թռում քարերուն,
Ցելնայ իջնայ գարերուն,
Հարսներ կանչեմ վըր ջրուն
Պագիմ ճակատ ղըրկիմ տուն։

536 Մեռայ բաղը գընալէն,
Ջրերի հետ խաղալէն,
Ծառներին թուփ չը մընաց
Դարտիս դարման անել էն.

537 Անձրեւ եկաւ շաղալէն,
Ուռու տերեւ դողալէն,
Հըրէս էկաւ իմ եարը
Ալ ձին տակին խաղալէն։

538 Ախչի՛ նստել ես բըջին 7),
Կը գործես խալի խուրջին,
Ախչի՛ քու ծամը կտրի
Խաբարդ է հասել գիւրջին 8)։

1) Հերթ. — 2) Շան ձագ. — 3) Զգոյշ. — 4) Օգնող. — 5) Սառոյց. 6) Ծամթել. — 7) Աշտարակ. — 8) Վրացի։

digitised by A.R.A.R.@

539 Սարի թրթնջուկ թաղա,
Մեղր ու շաքար քեզ մաղա 1),
Ի՛նձ պէս նազանի աղջիկ
Քեզ պէս տղին ո՞նց տալայ։

540 Դըրանս փակ չեմակալ,
Խնձոր քցեմ արի կա՛լ,
Վըրոջդ եարի հետը
Ինձ չինել ես քենակալ։

541 Աչքս քցել եմ սարին,
Ոտքս տուել եմ քարին,
Աստուածներդ օր սիրէ՛ք
Բան մի ըսէք իմ եարին։

542 Էլանք սարերը մօտիկ,
Ջուրը էկել է զօտիկ,
Ախչի՛, դու ի՛նչ խօրօտիկ,
Արի՛ մեր դրան մօտիկ։

543 Գիրըմ գրա՛՝ հարց ըրա՛,
Մինն էլ գրա՛՝ դարձըրա՛,
Թէ որ քեզ աղջիկ չեն տայ
Ղայրաթ 2) արա՛՝ փախցրա՛։

544 Էս տռուն ջուր ա էթում,
Մէ տեսէ՛ք ուր ա էթում,
Մըհանայ 3) քեն ին անըմ
Եարը տեհնալու ա էթըմ։

545 Ծառի միջին կանանչ էր,
Աղջիկն ընձի կը կանչէր,
Ջէն մի՛ հանա մարդիկ կան,
Աղջիկ հօրից կ'ամանչէր։

546 Սարից գալիս ա քամի,
Դու չես մընում մի համի,
Ամեն աժող չ'աժողի
Մի՛ թողնի միսս ծամի։

547 Ջաղացս կանի խաւար,
Դուշման քու աչքը խաւար,
Սիրել ենք իրար կ'առնենք
Թո՛ղ տանեն եօթը տաւար։

548 Մաի՛կ արէք էն դռին,
Ոտը դրել ա փշին,
Գլուխըս ղուրպան կը տամ
Ջալ աչքին, կարմիր թշին։

549 Ջեռդ 'ի զարկեր մըջ էղին,
Քուն չը տանայ մըջ տեղին,
Որ էն մէկ ոսկի խարճեմ 4)
Երեսդ քսա՛ իմ պէզին։

550 Վըրըր-վըրըր վըրաւոր,
Տէր խօր միրուք փըռաւոր,
Աղօ՛ խաքի նոր չուխայ
Ինձի կըլլես դու քաւոր։

551 Ջաղր 5) եմ տուել սարին,
Վաղայ եմ կտրե տարին,
Վաղայ կարած տարին տես
Էդ իէիլղար եարին տես։

552 Ջեռից փունջ կայ անթառա՛մ,
Մի՛նն էլ ես տամ անթառամ,
Ես-դու իրար հետ ապրինք
Մինչա անքեազար անթառամ։

553 Մեր տան եռնէն բախչայ կայ,
Բախչի միջին ռեհան կայ,
Ռեհանը քաղող պիտի,
Ծոցումը խաղող պտի։

554 Գէղէն ձորէն սայրուպար,
Աչքերդ մէյ մէ քեահրիպար 6),
Սիրտս ընկաւ սրտէդ քար,
Դու ինձ եղար հոգեառ։

555 Հանդում բուսնել ա սոկոն 7),
Մէրըդ թխել ա բոքոն,
Մեռնիմ ծոցիդ նռներին
Գըլմանի վարդի կոկոն։

556 Աղբէ՛ր հանաքից մեռնեմ,
Ոսկէ դանակից մեռնեմ,
Ճամբայ էրթող չէկ ախբէր
Դուքեան-բազարից մեռնեմ։

---

1) Արգելէն. — 2) Ջանք. — 3) Պատճառ. — 4) Ծախսել. — 5) Վըրան. — 6) — Սաթ. — 7) Սունկ.

digitised by A.R.A.R.@

557 Հանգը քաղհան ես դընում,
Հետըդ ուրիշն ես տանում,
Իմ դարտիցը խաբար չես
Ընծի սաղ-սաղ ես սպանում։

558 Առուիդ արասին ղուրպան,
Գինուդ կարասին ղուրպան,
Ճամբից գալող չէկ աղբէր
Սրտիդ հաւասին ղուրպան։

559 Եարալու-եարալու սիրտ,
Ո՞ւր ա մարալու սիրտը,
Շուտ մուրազիդ կու հասնիս
Մի՛ լար իմ բալալու 1) սիրտ։

560 Ա՛յ տղայ սեւ չուխաւոր,
Սաղմոսս ծոցիդ սաւոր,
Նրնակ կըտամ էն օրը,
Մեր տունը գաս թագաւոր։

561 Լուսաղէմին քուն կուգայ,
Կէս գիշերին տուն կուգայ,
Էրուած ու վառած եարին
Սրտիցը արիւն կըգայ։

562 Աղբէ՛ր բաղդ անուշ է,
Բաղիդ միջինը նուշ է,
Աղբէր խաթրըդ չը մընայ
Եարըս փեշնէն անուշ է։

563 Բախչա ունիմ ծառներով,
Մէջը լիքն ա գառներով,
Գառներ մատաղ կըրէի
Անուշ եարիս ձեռներով։

564 Ծառի տակին տաայ էր,
Եարոջ տեսնալ ղատայ 2) էր,
Շատ մի՛ ուտի կը պատրիս
Էգ քու սիրա՛ծն կեազա էր։

565 Ա՛յ տղայ բաղումն արի՛,
Ոտներդ չաղումն արի՛,
Էս թաղը զալմաղալ ա
Ման տու է՛ն թաղումն արի՛։

566 Բեռներով կազ 3) եմ բերել,
Քեզ ոսկէ մազ եմ բերել,
Հինդու անգլին քարերից
Գլխիդ փարուազ 4) եմ բերել։

567 Արտս ցորեն ցանեցի,
Դարդըս հետը թաղեցի,
Հազար ու մի աղօթքներ
Ցանած վախտը չարեցի։

568 Հաղո՛ղ, ծառդ անիծած,
Ունիս չատ աներ քանդած,
Ով քո ջըրից հեռանայ
Ջիբը կը մնայ փակուած։

569 Ա՛յ տղայ բաղի միջին,
Ոտներդ չաղի միջին,
Կանչի կանչելուդ մեռնեմ,
Ես եմ քու հաղի միջին։

570 Աչքըս քցել եմ սարին,
Ոտըս գլպաւ լեռ քարին,
Էրթայ ու էլ ետ չըգայ
Քեզ սալգաթ գըրած տարին։

571 Մարդ եմ ղրկել առաւօտ,
Որ դու չուտ գաս ինձ մօտ,
Աստուած անէ քու դիւան,
Կուզես քցես ինձ քու. ատ։

572 Նախըրը գնէն ուռի ծառ,
Խնձոր թալեմ 5) արի՛ տար,
Խնձորի կէս խածուկ էր,
Եարոջ գօտին գրած էր։

573 Կովի հորթը կապեցիր,
Նատար տանը կթեցիր,
Կաթն ու կարագը մեզրած
Եարիս փէշքէշ 6) ղրկեցիր։

574 Աշխըրքի մէջ մարալ ես,
Էշխովդ հոգիս հանալ ես,
Թէ ընծի թայ 7) չը մընաս
Ալամ գիտէ խաբել ես։

1) Ողորմելի. — 2) Արգելուած. — 3) ա. Մետաքս. բ. մի տեսակ չաքարեղէն բուսեղէնով պատրաստած. — 4) Գլխի զարդ ակներով. — 5) Գցել. — 6) Նուէր. — 7) Ընկեր։

digitised by A.R.A.R.@

575 Սոխակ կ'երգէ օր 'ի բուն,
Օրօր կասէ վարդերուն,
Սոխա՛կ Աստուծու խաթրու
Ինձ էլ չուտ բեր անուշ քուն։

576 Ժամ չինի կամար-կամար,
Սուտաս եմ 'քըզի համար,
Աղջի՛ Աստուածդ սիրես
Կե պահա՛ ընծի համար։

577 Գեղին էն քով Ս. Սարգիս,
Եար ջան արի Ս. Սարգիս,
Բարեկենդանին չը գաս
Էրկուշաբթի օր սատկիս։

578 Գանգատ եղայ մեր ռէսին 1),
Ռէսին էն սեւ էրեսին,
Արզայ 2) տուի որ թողայ
Տութազ արած մեր փէսին։

579 Արեւը մէր է - մէր ա,
Օչխարը, գառն անտէր ա,
Մ'էրաւորը մէրն ընկաւ
Անմէրը ընչի տէր ա։

580 Օրը մէջ մէկ կիրակի,
Օրը մէջ դու արաքի,
Օրը մէջ գլուխըդ մեռնի,
Որ քցեցիր մէջ կըրակի։

581 Վարդ ես քցել քու ուսին,
Առաւօտ արշալուսին,
Քու մէրը քեզ բռնել ա,
Արժան չի անում լուսին։

582 Դռան տակին թաք կացայ
Երոր գալըդ իմացայ,
Ոտներս սեւ ջուր իջաւ
Ա՛խ, մէկ ձէնըդ չ'իմացայ։

583 Սիրտըս լցուել ա կըրակ,
Ինձ ազատէ՛ք թէ կարաք
Թէ չէ էգուց կը մեռնիմ
Ես անխանչալ-անդանակ։

584 Արազը հեչտացել ա,
Ծամբէքը կոչտացել ա,
Խարար տարէ՛ք իմ նանին
Մուշտարիս 3) շատացել ա։

585 Տօ՛, ինչ զալո՛ւմ կ'երգես,
Էդ ո՞ր քածին կը խափես,
Քօչըդ արա՛ 4), հեռո՛ւ կաց,
Աղիքներըդ չը թափես։

586 Սարի գլուխը ես եմ,
Ձկներու կէսը ես եմ,
Քընող քրտնող եարոջ
Գիշերուան ընկերն ես եմ։

587 Քալէ՛, գնա՛ տունվար 'ի վար,
Բուլբուլ պահէ քեզ համար,
Սեւ երես ու սեւ միրուք
Ընձի չի գայ բարեբար։

588 Լուսնեակը էրթկով անցաւ,
Թըմբկի ետեւ անց կացաւ,
Մեր եայլի սիրուն աղջիկն
Ինձի ինչի՞ թէզ մոռցաւ։

589 Նխշուն ա նխշուն ղուշը,
Կարմիր ա եարիս թուշը,
Վա՛յ ջուրըն գայ ինձ տանի
Ոտը ծակել ա փուշը։

590 Միրուքըդ ածիլել ես,
Թշերըդ կարմրըցել ես,
Չի ըլնի որ մօտիկ գաս
Ու իմ հալից հարցընե՞ս։

591 Թուէն ծակ է եղ չ'կայ
Փեսէն էկաւ տեղ չը կայ,
Փեսին շատ էրես մի՛ք տալ
Փեսին էյթիպար չը կայ։

592 Ջուն կուգայ փաթիլ-փաթիլ,
Փառում ա մեր զարաֆիլ,
Սիրածին որ չը տեսնեմ
Արունս կերթայ գի՛փ կաթիլ։

---

1) Տանուտէր. — 2) Խնդրագիր. — 3) Գնող. — 4) Բանըդ տե՛ս։

digitised by A.R.A.R.@

593 Թոփ՛, թոփ՛, թոցոցեմ,
Սեւ հաւու միս կերցուցեմ.
Կարմիր գինի խմցուցեմ
Ծառի հովին քնցուցեմ։

594 Նանի՛, նանի վա՛յ նանի՛,
Նանի՛, քունըդ ո՞նց տանի,
Լուս կը տանեն ընձի,
Վա՛յ խեղճ նանիս ի՞նչ անի։

595 Եարս թութաղ ես արած,
Արունքս թողել սառած,
Գէլն ուտի քո էչ գլուխը
Փողով քեօխվա ես դառած։

596 Ես եմ գալիս կալիցը,
Պաչեմ ճակտից խալիցը,
Ի՞նչ կըլնի որ մի տեսնես՝
Հասկանաս իմ հալիցը։

597 Արտեր ցանեն կորընկան,
Եարս ի եկաւ վըր ծնկան
Աչքեր թալեց իմ յէրես
Իմ մէրը մնաց սեւերես։

598 Օսկի, մարջան ի՞նչ անեմ,
Սարդարի քօշքն ի՞նչ անեմ,
Մէ իմ եարիս ինձ տուէք.
Էլ ղզըլբաշն ի՞նչ կ՚անեմ։

599 Կայնել ես մէջի միջին,
Ջինարի ծառաց միջին,
Բեանուլդ կեր կըրցնես
Ալ վարդի փնջի միջին։

600 Համբարձումին մանենք պար,
Ես քեզ դու ինձ ասենք եար,
Ես ջա՛ն ասեմ դու գիւլում
Ուրախանանք միալար։

---

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

12 Հայոց գիւղերում փեսային թագաւոր են ասում։
33 Առհասարակ Մշոյ Ս. Կարապետ են ակնարկում, որովհետեւ ժողովրդի մէջ այն կարծիք կայ թէ նա ամենքի խնդիրը կատարում է։
44 Աշտարակ մեծ գիւղ է Ս. Էջմիածնից 18 վ. հեռու. հայրենիք Ներսէս Ե. Կաթ.-ի, Գ. Պռօշեանի եւ Ս. Շահազիզի։ Բնակիչները շատ ճարտար լեզու են եւ ոտանաւորով հայհոյել գիտեն։
45 Արազ կամ Արաքս կամ Երասխ մայր գետ Հայաստանի, որ Կուրի հետ միանալով թափւում է Կասպից ծովը։
63 Հայոց մէջ սովորութիւն կայ երբ հիւր է գալիս մերթ հարսը մերթ ջահէլ աղջիկն է մօտենում ոտնամանները հանում եւ նոյն իսկ ոտները լուանում։
76 Բաշ-Շորագեալ գիւղ Ալէքսանդրապօլ քաղաքի մօտ։
81 Չորս տարի զինուորութեան ժամանակամիջոց։
28 Քանաքեռ գիւղ Երեւանից 7 վ. հեռու, հայրենիք անմահ Խաչատուր Աբովեանի։
95 «Տարան-Տարան»։ Երեւանի կողմեր երբ հարսին հօր տնից տանում են, լաց ու կոծ է բարձրանում իսկ զուռնան մի տխուր եղանակ է ածում, որ այդպէս է կոչւում։
103 Ղօշիվանքի ղշեր գտնւում են Անի քաղաքից մօտ 5 վ. հեռու։ Սա յաղթական կամար է, որ այժմ աւերակ է։ Այդպէս է կոչւում եւ մօտի վանքը, որտեղ թաղուած է Աշոտ Գ. Ողորմած թագաւորը, որի տապանաքարի վրայ գրած է «Աշոտ թագաւոր Հայոց»։ Այստեղ կայ նաեւ հանքային աղբիւր։

digitised by A.R.A.R.@

123 Մողնի Ս. Գէորգ եւ Հաննավանք (Ս. Յովհաննու վանք). երկու վանքերն էլ բաւական հին են եւ գտնւում են միմեանց մօտիկ Ս. Էջմիածնից ոչ հեռու: Հաննավանքը շինուած է ժայռերի վրայ: Շատ հնութիւններ կան երկու վանքերումն էլ:

158 Բուլանըխ գիւղ:

172 Ըսպահան-Իսպահան, քաղաք հարաւային Պարսկաստանի. հին մայրաքաղաք: Այս քաղաքի մօտն է շինած Շահ-Աբասի փչած գաղթականների Նոր-Ջուղա քաղաքը:

193 Ուշի, Օշական, Բիւրական գիւղեր Ս. Էջմիածնի մօտ: Օշականումն է թաղած հայ նախարար նշանաւոր Վահան Ամատունին, իսկ եկեղեցու մէջն էլ հայոց գրեր հնարող Ս. Մեսրոպ Մաշտոցը: Բիւրականը Հայոց կաթուղիկոսների ամառանոց է:

206 Յայսմաւուրք գիրք. որտեղ գրուած է բոլոր սրբերի կենսագրութիւնները: Հին ժամանակ կարդում էին եկեղեցում երեկոյեան ժամերգութիւնից յետոյ:

230 Կարբի գիւղ Ս. Էջմիածնի մօտ, բնակիչները շատ ճարտար:

252 Գեանջա - Գանձակ կամ Ելիսաւետպօլ քաղաք:

266 Կեօրխս - Գօրիս գիւղաքաղաք Շուշուց 50-60 վ. հեռու:

338 Գէորգ դուշ. Ս. Էջմիածնի կողմեր մի տեսակ թռչուն կայ, որ 'ի պատիւ Գէորգ Դ. Կաթուղիկոսի այդպէս է կոչւում:

346 Կողբ. մեծ գիւղ Երեւանից մօտ 40 վ. հեռու, նշանաւոր է աղահանքով. այդտեղացի էր Ե. դարու նշանաւոր մատենագիր Եզնիկ Կողբացին.

353 Ալագեազ կամ Արագած լեառ Ս. Էջմիածնի մօտ:

358 Ստամբօլ-Կ. Պօլիս, Տաճկաստանի մայրաքաղաք:

394 Աղուես դար. Կողբի մօտ բլուր է:

401 Կարմիր վանք. Ալէքսանդրապօլի մօտ վանք եւ գիւղ. եկեղեցին շինած է կարմիր քարից, որի համար եւ այդպէս է կոչւում:

403 Կարծախ գիւղ Հայոց Ախալքալաքի գաւառում:

440 Ղուրուշ. տաճկական դրամ, արժէ մօտ 7-8 կոպէկ:

504 Վարդ Վարդան- Կարմիր Վարդան, 451 թ. առաջին կրօնական պատերազմի քաջ զօրավարը:

520 Եայլաղ ըլկէլ կամ գնաչ. գիւղացիք շատ տեղերում ամառուայ շոգից ազատուելու համար հով սարեր են բարձրանում, որ նրանց ամառանոցն է, իսկ առհասարակ անտառներին տանելն է կոչւում այդպէս:

557 Փաղիան անէլ. ցանած տեղից աւելորդ խոտեր դուրս պոկել:

566 Հինդ = Հնդկաստան:

598 Սարդարի քօշկ գտնւում է Երեւանում, դա մնացել է պարսկական տիրապետութիւնից, մէջը զարդարուած է պատկերներով: Շինուած է մի ձորի ափին: Դա պարսիկ սարդարների-կուսակալների պալատն էր եւ այսօր էլ կայ:

digitised by A.R.A.R.@